Գիտություն

ՀՈՒՆԻՍ
№ 6
(235)
2011թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Կայացան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավար կազմի ընտրությունները

ՀՀ ԳԱԱ գործող նախագահ, ակադեմիկոս ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ վերընտրվեց

Հունիսի 28-ին կայացավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, որի կազմում ընդգրկված էին ՀՀ ԳԱԱ 66 իսկական անդամներ (ակադեմիկոսներ), 62 թղթակից անդամներ և ՀՀ ԳԱԱ գիտական հաստատությունների և կազմակերպությունների 41 լիազոր ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցում էր 151 մարդ:

Համաձայն կանոնադրության, ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրվեցին թեկնածուներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արմեն Գալոյանը առաջադրեց գործող նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սուրեն Մխիթարյանը առաջադրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի թեկնածությունը:

Այնուհետև առաջադրված թեկնածուները ժողովի մասնակիցներին ներկայացրին գործունեության իրենց ծրագրերը: Բազմաթիվ ելույթներից հետո ժողովը անցավ քվեարկության:

Փակ-գաղտնի քվեարկության արդյունքներով գործող նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ստացավ ձայների մեծամասնությունը՝ 102 կողմ, իսկ Լենսեր Աղալովյանը՝ 34 կողմ:

Ընդհանուր առմամբ, երկու թեկնածուներին դեմ քվեարկեցին 7 ընտրող, 8 քվեաթերթիկ ճանաչվեց անվավեր:

Այսպիսով, հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ վերընտրվեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց գործող փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանին, իսկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնի համար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանի թեկնածությունները: Փակ-գաղտնի քվեարկությամբ, համապատասխանաբար ստանալով 118 և 115 ձայն՝ Յուրի Շուքուրյանը և Հրանտ Մաթևոսյանը ընտրվեցին առաջադրված պաշտոններում:

Հունիսի 29-ին ավարտվեցին ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունները: Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Առաքելյանը: Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանը: Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը: Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Լևոն Թավադյանը: Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սուվարյանը:

Նորընտիր ակադեմիկոս-քարտուղարները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթևոսյանը ի պաշտոնե ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմի մեջ: ՀՀ ԳԱԱ նախագահության ազատ անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Լենսեր Աղալովյանը, Էդուարդ Ղազարյանը, Վանիկ Զաքարյանը, Կառլեն Ադամյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը գոհունակություն հայտնեց այն միասնականության համար, որը ցուցաբերվեց ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունների ժամանակ և վստահություն հայտնեց, որ նման միասնականություն կցուցաբերվի նաև գիտության զարգացման ծրագրերի իրականացման, հասարակության կյանքում ակադեմիայի և գիտնականի դերի ամրապնդման գործում:

5-ամյա արդյունավետ աշխատանքի համար ՀՀ ԳԱԱ նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին, հատկապես նրանց, ովքեր չընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Համբարձումյանին, Վլադիմիր Բարխուդարյանին, Ադոլֆ Մանթաշյանին, Արամ Շահինյանին, Ռոբերտ Աբոյանին:

ՀՀ նախագահի հրամանագրով

Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով հանրապետության տոնի կապակցությամբ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի, տնտեսության, առողջապահության ոլորտի մի խումբ աշխատողներ պարգևատրվել են բարձրագույն պետական պարգևներով՝ մեդալներով և շքանշաններով, շնորհվել են նաև պատվավոր կոչումներ:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով պարգևատրվել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ

Վանիկ Սուրենի ԶԱՔԱՐՅԱՆԸ

Յուրի Միքայելի ՍՈՒՎԱՐՅԱՆԸ

«Անանիա Շիրակացու» մեդալի է արժանացել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Մուշեղի ՂԱԶԱՐՅԱՆԸ:

Գիտության վաստակավոր գործչի կոչման են արժանացել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ

Վլադիմիր Միխայիլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ,

Յուրի Հայկի ՇՈՒՔՈՒՐՅԱՆԸ:

Շնորհավորել է ՀՀ նախագահը

Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել ամերիկահայ ճանաչված գիտնական, պատմաբան, «Զորյան» ինստիտուտի ցեղասպանության ուսումնասիրության գծով տնօրեն, պրոֆեսոր Վահագն Տատրյանին՝ ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ:

Ուղերձում ասված է.

«Հարգելի պարոն Տատրյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ:

Դուք մեր ժամանակների մեծագույն հայ գիտնականներից եք, ում գիտական գործունեությունն ու աշխատանքներն ունեն մեծ հասարակական-քաղաքական հնչեղություն: Ձեր ավանդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և ժխտողականությանը փաստարկված ու ծանրակշիռ հակահարվածներ հասցնելու գործում շարունակաբար տալիս է իր տեսանելի արդյունքը: Այն մեծ ներդրում է ցեղասպանության հանցագործության դեմ միջազգային պայքարում, որտեղ Հայաստանը ստանձնել և մշտապես պահպանելու է առաջամարտիկի իր դերը:

Հայրենիքում գիտեն, սիրում ու գնահատում են Ձեզ՝ որպես մարդու, ով իր կյանքն ու գործը նվիրել է իր ժողովրդի արդար դատի պաշտպանությանը:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երկար ու բեղմնավոր տարիներ»:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ

ԳՐՔԻ ԾՆՈՐՀԱՆԴԵՍ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Հայոց ավելի քան հինգհազարամյա պետականության հայկյան ակունքներից ընծյուղվող Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին էր նվիրված 2005 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, Հայ Առաքելական եկեղեցու սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատան, Համազգային հայ կրթական և մշակութային միության կազմակերպած գիտական նստաշրջանը: Եվ ահա ընթերցողի սեղանին է «Տիգրան Մեծ» ծանրակշիռ ժողովածուն, որում ամփոփված են գիտաժողովի նյութերը: Գիրքը հրատարակվել է ամերիկահայ բարերար էդուարդ Մսըրլյանի մեկենասությամբ: 500 օրինակով գիրքը հրատարակել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը:

Ինչպես իր «Երկու խոսքում» նշում է գրքի խմբագիր էդուարդ Դանիելյանը.

«Սույն ժողովածուում ամփոփված են գիտաժողովում ներկայացված զեկուցումները, որոնք նվիրված են Մեծ Հայքի թագավորությունը համաշխարհային նշանակության տերության աստիճանի հասցրած Արքայից արքա Տիգրան Բ Մեծի կյանքին և պետական, կենտրոնաձիգ քաղաքական, զորավարական, դիվանագիտական, քաղաքակրթական ու մշակութային գործունեությանը, որը բխում էր հայ հասարակության՝ հազարամյակների խորքից եկող քաղաքակրթական զարգացումներից»:

«Տիգրան Մեծ» գրքին նվիրված շնորհանդեսը հակիրճ խոսքով բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը շնորհավորեց և կարևորեց ժողովածուի տպագրությունը: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց գրքի խմբագիր էդուարդ Դանիելյանին, ամերիկահայ բարերար էդուարդ Մսըրլյանին, «Գիտություն» հրատարակչությանը, որոնց ջանքերով իրականություն է դարձել անչափ կարևոր այս գրքի ծնունդը, քանի որ Տիգրան Մեծի կյանքն ու գործունեությունը, նրա կերպարի ամբողջական բացահայտումը եղել է և պետք է մնա հայ պատմագրության կարևոր խնդիրներից մեկը:

- Ողջունելի է, որ այս ժողովածուում ամփոփվել են Տիգրան Մեծին նվիրված մենագրություններն ու զեկույցները, արտասահմանյան հեղինակների ուսումնասիրությունները: Ժողովածուն մի հիանալի տեղեկատու է՝ հանրագիտարանային արժեքով, և կարևոր ձեռքբերում տիգրանագիտության ասպարեզում:

Շնորհանդեսին ելույթ ունեցան ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանը, Վահան Հովհաննիսյանը, ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան էդ. Մինասյանը և այլք:

Հատուկ շնորհակալություն հայտնելով ժողովածուի կազմման աշխատանքների բոլոր մասնակիցներին՝ գրքի հրատարակության հովանավոր, ամերիկահայ բարերար էդուարդ Մսըրլյանը հույս հայտնեց, որ առաջիկայում ժողովածուն կհրատարակվի օտար լեզուներով:

Ի դեպ, նոյեմբեր ամսին ԳԱԱ պատմության ինստիտուտը կհրավիրի միջազգային գիտաժողով՝ «Հայկական քաղաքակրթությունը մետաքսի ճանապարհին» թեմայով, որն էլ կլինի գրքի բովանդակության յուրովի շարունակությունը:

Օրերս «Գրքարվեստ» հանրապետական չորրորդ մրցանակաբաշխությունում «Տիգրան Մեծ» գիրքը արժանացել է առաջին կարգի դիպլոմի:

...Այլ փրկէա զմէզ ի չարէ...

Տերունական աղոթքի այս բառերը հանկարծ հիշեցի, երբ երկու երիտասարդ աղջիկներ դիմեցին ինձ՝ ստորագրելու ինչ-որ ցուցակ: Պարզվեց՝ մեր երիտասարդները ստորագրահավաքի ակցիա են անցկացնում՝ Հայաստանը հեղեղած աղանդավորների նկատմամբ լուրջ միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Ես չիմացա՝ ում էր ուղղված այդ կոչ-պահանջը՝ իշխանությունների՞ն, Առաքելական սուրբ եկեղեցո՞ւն: Նաև չգիտեմ՝ ինչ օգուտ է տալու այդ ստորագրահավաքը, սակայն որ երիտասարդությունն է այսօր ընդվզում աղանդավորների դեմ, ինձ համար անչափ կարևոր և ուրախալի փաստ է: Չի իսկապես համբերության բաժակը լցված է. երկու միլիոնից մի քիչ ավելի բնակչություն ունեցող մեր երկրում կա 360 հազարից ավելի աղանդավոր:

Տարբեր անուններով այդ աղանդները, որոնցից շատերը խնդիր ունեն անգամ խարխլելու մեր պետության հիմքերը, հայ մարդուն դարձնելու հայրենիք ու ազգություն չճանաչող զոմբի, անպատիժ, լպիրշ, ագրեսիվ և լկտի, ազատ, անվախ, անպարկեշտ, աներես ու հարձակողական, պնդաճակատ գրոհում են մարդկանց բնակարանները, փողոցներում, հասարակական վայրերում անթաքույց հոգիներ են որսում, խեղում մարդկանց, հատկապես երեխաների ուղեղները, ինքնասպանության, պոռնկության դրդում, հավատուրաց և ազգուրաց դարձնում և, եթե պետք է, եկեղեցու բակում հայ հոգևորական ծեծում:

Այլ խոսքով՝ ամենաթողություն է, վհուկների խրախճանք: Ցավով պիտի փաստենք, որ այս հանգամանքը ոչ մեկին չի անհանգստացնում:

Մեր իշխանությունները Եվրոպային դուր գալու համար զանազան կոնվենցիաներ են ստորագրում՝ մարդու իրավունքների, խղճի, դավանանքի, ազատության, ժողովրդավարության վերաբերյալ և առանց բացառության գրանցում, իրավական արտոնություններ նվիրում ամեն տեսակ թափթփուկների, վնասակար, թշնամի աղանդների, որոնք էլ, այդ իրավունքը դրոշ դարձրած, անում են իրենց սև, չարագույժ գործը: Չենք ուզում կրկնել, սակայն հարկադրված ենք՝ այսօր նրանք քանդում-ավերում են մեր ինքնությունը պահպանող բոլոր կռվանները: Նրանք անպատժելի են, ունեն հսկայական ֆինանսական հնարավորություններ և ծրագրված գործունեություն են իրականացնում՝ նպատակամղված սասանելու մեր ազգային պետության հիմքերը, այլասերելու, աղավաղելու հայի ազգային նկարագիրը, ասել է՝ բացահայտ վնասակար են մեզ համար:

5-րդ դարում հայ ժողովուրդն ազգովի կռվի ելավ

պարսից արքայի հավատուրացության պահանջի դեմ: Հայ Առաքելական սուրբ եկեղեցու հոգևոր այրեր, ի՞նչ եք դուք անում Ձեր հոտը պահպանելու համար, չէ՞ որ մայր եկեղեցուց խլում, տանում, հափշտակում են հայ քրիստոնյաներին, կողոպտում են ազգը, եկեղեցին, մեր սուրբ հավատը, որը մեզ պաշտպանել է, օգնել, որ մենք հայ մնանք:

Սբ. Էջմիածինը, փոխանակ վճռական միջոցներ ձեռնարկելու այս աղետի դեմ, ամեն տարի ու ամիս նոր եկեղեցի է բացում, օրհնում: Ձեզ չի՞ թվում, որ մի քիչ շատ են խրախուսվում տարբեր մեծահարուստների անունով եկեղեցիներ կառուցելու փառասիրական նկրտումները: Իր ժամանակին Մեծն Ջիվանին ասում էր.

Իրենք հաց չունեն ուտելու համար,
Յոթ հատ վանք են կառուցել, խելքի աշեցեք:

Այո՛, խելքի եկեք: Մի՞թե չի կարելի այդ նվիրատուներին հորդորել, որ եկեղեցու փոխարեն շենքեր կառուցեն և բնակարան տան հազարավոր անտուններին, որոնք հաճախ նաև տուն չունենալու պատճառով են դառնում աղանդավոր կամ բռնում պանդխտության ճամփան: Կամ եթե դրամ կա, նորոգենք մեր պատմական հուշարձանները՝ Սանահինը, Հաղպատը և այլն, որոնք ավերվում են:

Հավատացնում եմ Ձեզ, սուրբ հայրեր, մեր եկեղեցիներն առայժմ մեզ լիովին բավական են, դուք կռվե՛ք, պայքարե՛ք, մարտնչե՛ք մոլորյալներին հավատի բերելու, վերադարձնելու համար: Թե չէ, մեկ էլ կտեսնեք, որ այդ 360 հազարից ավելի թիվը վաղը կդառնա կես, մեկ միլիոն, իսկ վերջում՝ այլևս ոչինչ...

Մենք, դժբախտաբար, թշնամիներով շրջապատված, պատերազմական վիճակում գտնվող երկիր ենք: Մեզ հայրենիքի պաշտպան զինվորներ են պետք: Աղանդները մեզնից գողանում են նաև մեր այսօրվա, վաղվա հայրենիքի զինվորներին: Չէ՞ որ սա մեծ աղետ է, սպառնալիք: Աղանդավորների համար մեր հույժ ժողովրդավար երկիրն այլընտրանքային ծառայության արտոնություն է սահմանել՝ 2005 թվականից: Հիմա 2011 թվականն է, և մինչև օրս ոչ մի աղանդավոր չի օգտվել այդ իրավունքից, չի ծառայել: Եվ ոչ մի վերաբերմունք, ոչ մի արձագանք մեր իշխանությունների, օրենսդիր մարմնի կողմից: Չէ՞ որ նրանք ենթակա են դատական պատասխանատվության:

Ստեղծված վիճակն անպայման տագնապալի է: Եվ անչափ ուրախալի է, որ խնդիրն անհանգստացրել է մեր երիտասարդներին, որոնք ստորագրահավաք են անցկացնում՝ աղետալի այս երևույթի առաջն առնելու պահանջով: Շատ կցանկանայինք, որ մեր երիտասարդները հետևողական լինեն այս հարցում:

Մի կարևոր հանգամանք ևս: Այս անիծյալ աղանդների շատ առաջնորդներ հաճախ իրենց հետևորդներին գուժում են աշխարհի վերջը՝ օրով, ժամով: Իսկ նրանց հավատացողները՝ համոզված աշխարհի մոտալուտ վախճանով, ինքնասպանություններ են գործում, հանցագործություններ կատարում և չգիտես, թե էլ ինչ: Այդ վհուկները ժամանակ առ ժամանակ կռավում են աշխարհի վերջի, Փրկչի երկրորդ գալստյան մասին:

Վերջերս նայեցի Միացյալ Նահանգներում նկարված մի հեռուստատեսային ռեպորտաժ: Հարցը մեկն էր.

- Հավատո՞ւմ եք, որ գալու է աշխարհի վերջը:

Պարզվեց, որ շատերն են հավատում այդ լուրին, որի «մարգարեն» ինչ-որ աղանդի առաջնորդ, 89-ամյա Հարոլդ Քեմպինգն է: Ըստ նրա՝ մայիսի 21-ին աշխարհը պիտի կործանվեր, սակայն երբ անցավ այդ օրը, դժոխքի ներկայացուցիչ, խելապակաս վհուկը մի քանի ամսով հետաձգեց այդ վերջը:

Ի լուր բոլոր աղանդավորների և այն պարզամիտների, որոնք հավատում են նման դժոխքի գուշակների, մեջբերում ենք Հիսուս Քրիստոսի խոսքերն իր երկրորդ գալստյան մասին.

«Այդ օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի, ոչ էլ անգամ երկնային հրեշտակները, գիտե միայն Իմ Հայրը միակ...»:

Իմ համոզմամբ, հայ երիտասարդների ստորագրահավաքն ունի մի կարևոր խնդիր և պահանջ իշխանություններից, եկեղեցուց.

- ՓՐԿԵՑԵ՛Ք ԶՄԵԶ Ի ՉԱՐԷ...

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Վահագն ՏԱՏՐՅԱՆ

Մեծանուն գիտնական, նշանավոր ցեղասպանագետ և Հայոց ցեղասպանության պատմության նշանավոր գիտակ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, փիլիսոփայության և սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր Վահագն Տատրյանը ծնվել է 1926 թվականի մայիսի 26-ին Կոստանդնուպոլսում (Ստամբուլ):

Պրոֆեսոր Տատրյանը բազմակողմանի կրթություն է ստացել Եվրոպայում և ԱՄՆ-ում: Նախ նա մաթեմատիկա է ուսանել Բեռլինի համալսարանում, ապա պատմություն՝ Վիեննայի համալսարանում և միջազգային իրավունք Ցյուրիխի համալսարանում: Տեղափոխվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ Տատրյանը շարունակել է իր ուսումը Չիկագոյի համալսարանում ստանալով փիլիսոփայության և սոցիոլոգիայի դոկտորի գիտական աստիճան: Դրան զուգահեռ Վ. Տատրյանը մեծ ուշադրություն է դարձրել լեզուների ուսումնասիրմանը: Նա ազատորեն տիրապետում է անգլերենին, գերմաներենին, ֆրանսերենին, օսմաներենին, ինչպես նաև ժամանակակից թուրքերենին և հայերենին, որի շնորհիվ մեծածավալ ուսումնասիրություններ է կատարել տարբեր երկրների արխիվներում:

Ստանալով հիմնարար կրթություն և ունենալով լեզուների փայլուն իմացություն՝ Տատրյանը հմտորեն և հաջողությամբ դասախոսական աշխատանք է կատարում: Ցեղասպանության հարցերին նվիրված դասախոսություններով նա հանդես է եկել աշխարհի բազմաթիվ համալսարաններում, գիտական և հասարակական կենտրոններում, միջազգային իրավական ատյաններում: Շուրջ քսան տարի նա դասախոսել է ամերիկյան բուհերում՝ Նյու Յորքի պետական համալսարանում, Հարվարդի համալսարանում, ինչպես նաև Միջին Արևելքի ուսումնագիտական և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի միջազգային ուսումնասիրությունների կենտրոններում: Նա դասախոսություններով հանդես է եկել նաև Գերմանիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Շվեդիայի, Հոլանդիայի, Բելգիայի և այլ երկրների առաջատար համալսարաններում, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՈ-ի փարիզյան գրասենյակում:

Դասախոսական գործունեությանը զուգահեռ պրոֆեսոր Տատրյանն իր կոչումը տեսնում է տարբեր երկրների արխիվային նյութերի ուսումնասիրության միջոցով Հայոց ցեղասպանության և հիմնախնդիրների լուսաբանման մեջ: Մասնավորապես, երկար տարիներ նա ղեկավարել է "Guggenheim" հիմնադրամի կողմից հովանավորվող "Ցեղասպանության ուսումնասիրման" լայնածավալ նախագիծը:

Պրոֆեսոր Տատրյանն առաջին հայ գիտնականն էր, ով 1995 թվականին Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցի կապակցությամբ հրավիրվեց Բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատ՝ դասախոսություն կարդալու:

Պրոֆեսոր Տատրյանի գիտական ուսումնասիրությունների ոլորտն ընդգրկում են ցեղասպանագիտական ուսումնասիրությունները: Հետազոտելա Հայոց ցեղասպանության պատմության, համեմատական ցեղասպանագիտության հարցերի, ցեղասպանության իրավական, հոգեբանական տեսանկյունների ուսումնասիրությունը և վերլուծությունը: Նրա ավանդն այդ հարցերի հետազոտման մեջ, հիրավի, վիթխարի է: Հենց նրա գիտական գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը հուզականից տեղափոխվեց գիտական մակարդակ, ինչը մեծապես նպաստեց հարցի ուսումնասիրման միջազգայնացմանը և միջազգային գիտական հանրությանն ընկալելի դարձնելուն: Կարելի է միանշանակ փաստել, որ գիտական և հասարակական իր գործունեության շնորհիվ Վահագն Տատրյանը մեծապես նպաստել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Հայոց ցեղասպանության պատմության տարբեր դրվագների ուսումնասիրմանն են նվիրված Վահագն Տատրյանի երկու տասնյակից ավելի մենագրությունները և հարյուրից ավելի հոդվածները, որոնք հրատարակվել են անգլերենով, ֆրանսերենով, թուրքերենով, գերմաներենով, ռուսերենով, հայերենով և այլ լեզուներով: Հարկ է առանձնահատուկ նշել Վ. Տատրյանի՝ 1995 թվականին Ստամբուլում թուրքերենով հրատարակված «Ցեղասպանությունը որպես ազգային և միջազգային իրավունքի խնդիր: Հայկական հարցն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրա արդի իրավական հետևանքները» խորագիրը կրող մենագրության մասին: Այդ գիրքը սկզբում դատարանի որոշմամբ արգելվեց, սակայն այդ արգելքը վերացվեց թուրքական վճռաբեկ դատարանի որոշմամբ:

Պրոֆեսոր Տատրյանի հրատարակած աշխատություններից առանցքային է 1995 թվականին Անգլիայում լույս ընծայված «Հայոց ցեղասպանության պատմությունը (էթնիկական ընդհարումները Բալկաններից մինչև Անատոլիա)» մենագրությունը՝ հեղինակի քսան տարվա ուսումնասիրությունների հանրագումարը: Այդ գրքում հեղինակը հետապնդել է երկու հիմնական նպատակ.

1. Արխիվային և փաստական հարուստ նյութի հիման վրա ուսումնասիրել և բացահայտել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված Հայոց ցեղասպանությունը,

2. Ներկայացնել Հայոց ցեղասպանության պատմական գնահատականը:

Նույն թվականին հրատարակվում է նաև «Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով»ուսումնասիրությունը:

1996 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հրատարակվեց պրոֆեսոր Տատրյանի մեկ այլ մեծակտավ աշխատությունը՝ «Գերմանիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության մեջ» մենագրությունը, որտեղ հեղինակը փաստական նյութի հիման վրա բացահայտել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակից Կայսերական Գերմանիայի դերակատարությունը և պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության իրականացման գործում:

1999 թվականին լույս է տեսնում երկու արժեքավոր մենագրություն՝ «Ցեղասպանության երաշխիք. հայ-թուրքական կոնֆլիկտի առանցքային բաղադրիչները» և «Հայոց ցեղասպանության թուրքական ժխտման առանցքային բաղադրիչները»:

Պրոֆեսոր Տատրյանի հեղինակած ուսումնասիրությունների ցանկը կարելի է երկար շարունակել, սակայն բավարարվենք այսքանով:

Վահագն Տատրյանը մշտապես սերտ կապերի մեջ է Հայաստանի հետ:

Հաշվի առնելով Վահագն Տատրյանի վիթխարի դերակատարումը պատմագիտության, Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման և լուսաբանման մեջ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 1995 թվականին նրան շնորհել է ՀՀ ԳԱԱ Պատվավոր դոկտորի կոչում: 1998 թվականին պրոֆեսոր Տատրյանը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Բարձր գնահատելով Վահագն Տատրյան գիտնականի մեծ ծառայությունները և սերտ կապերը Հայաստանի հետ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 1998 թվականին նրան ընտրել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի կապակցությամբ 2005թ. ապրիլին Հայաստանում կարդացած դասախոսություններից հետո Հայաստանի չորս համալսարանների կողմից Տատրյանը հռչակվել է պատվավոր պրոֆեսոր և արժանացել երեք ոսկե մեդալի:

2009 թվականին նա մասնակցել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովին՝ նվիրված Ադանայի ջարդերի 100-ամյա տարելիցին: Այդ գիտաժողովում պրոֆեսորը ներկայացրել է «Հետադարձ հայացք 1909թ. Ադանայի երկու կոտորածներին» արժեքավոր զեկույցը: Բացի այդ, նույն ժամանակ Վահագն Տատրյանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում ներկայացրել է հրապարակային դասախոսությունների շարք՝ նվիրված Հայոց ցեղասպանության տարբեր հիմնախնդիրներին:

Ներկայումս պրոֆեսոր Տատրյանը բնակվում է ԱՄՆ-ում և ղեկավարում է «Զորյան» ինստիտուտի Ցեղասպանության ուսումնասիրության կենտրոնը:

Այսօր էլ մեծանուն գիտնականը շարունակում է համագործակցել ՀՀ գիտակրթական կազմակերպությունների հետ և իր ազգանվեր գիտական գործունեությամբ մեծապես նպաստել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Օրերս լրացավ մեծանուն գիտնականի ծննդյան 85-ամյակը: Ջերմորեն շնորհավորում ենք ականավոր պատմաբանին, ցանկանում քաջառողջություն և ամենալուսավորն ու պայծառը:

Կլոր սեղան ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Այդ կապակցությամբ հունիսի 8-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ կլոր սեղանի քննարկում «Թուրքիան ընտրությունների նախաշեմին» խորագրով:

ՁԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած կլոր սեղանի քննարկումը բացեց Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Սաֆրաստյանը: Նա նշեց, որ Թուրքիայում ընտրապայքարն անցնում է լարված մթնոլորտում: Եվ չնայած ընտրապայքարին մասնակցում են 15 կուսակցություններ, սակայն ներկայիս կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցության հաղթանակն անխուսափելի է:

Այնուհետև սպասվող խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իրենց դիտարկումները ներկայացրին Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատողներ Վահրամ Տեր-Մաթևոսյանը (պ.գ.թ.), Անուշ Հովհաննիսյանը և Տաթևիկ Մանուկյանը:

Վ. Տեր-Մաթևոսյանն անդրադարձավ Թուրքիայում գործող կուսակցությունների միջև ընթացող ընտրապայքարին նշելով, որ Թուրքիայի համար գալիք ընտրություններն առանձնահատուկ են մի շարք առումներով: Նա ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ երկրի առաջատար կուսակցու-

թյուններն ընտրությունների են գնում թեկնածուների թարմացված ցուցակներով: Նախ՝ այս ընտրություններին չեն ներկայացվել իշխանամետ «Արդարություն և զարգացում» կուսակցության խորհրդարանական խմբակցության կազմում գործող 164 պատգամավորների թեկնածությունները, իսկ «Հանրապետական ժողովրդավարական» կուսակցության 101 գործող պատգամավորներից միայն 23-ն են ընդգրկվել նախընտրական ցուցակում:

Ա. Հովհաննիսյանն էլ, խոսելով ընտրապայքարում առաջ քաշված երկրի արտաքին քաղաքականությանը վերաբերող ծրագրերի մասին, նկատեց, որ Թուրքիայի կուսակցություններից յուրաքանչյուրն ընտրազանգվածին առաջարկում է զարգացման սեփական մոդելը: Ըստ նրա՝ ԱԶԿ-ն հանդես է գալիս բավական հավակնոտ արտաքին քաղաքական ծրագրով՝ ընտրողներին խոստանալով մոտակա տարիներին Թուրքիան դարձնել ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ մասշտաբով եղանակ ստեղծող պետություն: Ի տարբերություն ԱԶԿ-ի՝ ՀԺԿ ծրագիրը Թուրքիայի համար ավելի համեստ դեր է նախատեսում համաշխարհային քաղաքականության մեջ:

Տ. Մանուկյանն էլ նշեց, որ Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում աննախադեպ հետաքրքրություն կա քրդական գործոնի նկատմամբ: Նրա դիտարկմամբ այս ընտրություններում ակնհայտ դարձավ, որ քրդական կուսակցությունները միասնական ցուցակով չեն կարող հաղթահարել 10 տոկոսանոց շեմը, և այդ պատճառով իշխանություններից պահանջում են սահմանել 5 տոկոսանոց շեմ: Փորձագետի կարծիքով դա ստիպել է քրդամետ կուսակցություններին միավորվել մի պլատֆորմի մեջ, որը կոչվում է «Աշխատավորական ազատությունների և ժողովրդավարության ճակատ»: Այս ուժը ընտրություններին ներկայացրել է 60 թեկնածու, հավակնում է ստանալ 35-40 մանդատ:

Կլոր սեղանի մասնակիցները հանգեցին այն գնահատականին, որ ներկայիս իշխանամետ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը շարունակում է մնալ խորհրդարանում մեծամասնություն կազմելու ամենահավանական տարբերակը: Որպես կարևոր առանձնահատկություն նշեցին նաև այն հանգամանքը, որ ընտրապայքարն անցնում է երկրի քաղաքական կյանքում զգալի ազդեցություն ունեցող զինվորականության վրա աննախադեպ ճնշումների ներքո:

ԱՐԱՔՍԻ ՕՀԱՆՅԱՆ.

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՍԻՐԱՆՈՒՅՇԸ

Նրան միշտ համեմատել են Սիրանույշի հետ. անսահման նվիրվածություն թատրոնին, արտիստական բացառիկ խառնվածք, ստեղծագործող մարդուն բնորոշ որոնումների նմանօրինակ ընթացք: Ժանրերի բազմազանություն՝ օպերետ, սալոնային մելոդրամա, դրամա, ողբերգություն, հետևաբար՝ նաև խաղացանկի նմանություն: Ի վերջո, մի դեր, որին հանդգնել են դիմել միայն իրենց ուժերին վստահ արվեստագետները: Արաքսի Օհանյանը, ինչպես և Սիրանույշը, խաղացել է Համլետ՝ ունենալով այս քայլին դիմելու նույն շարժառիթները, արժանանալով հանդիսատեսների և քննադատության նույն՝ թերահավատ վերաբերմունքին:

Ա. Օհանյանը (Արաքսի Վարդյան, Վարդ-Օհանյան, 1911-1981) եգիպտոսի հայ թատրոնում հայտնվեց բախտորոշ մի ժամանակաշրջանում. հեռանում էր թատերական գործիչների առաջին սերունդը՝ Օննիկ Վոլթեր, Լևոն Շիշմանյան, Արփիար Վարդյան և ուրիշներ, իսկ հաջորդը դեռևս բավականաչափ պատրաստ չէր ինքնուրույն գործունեության համար: Թատրոնի, իսկ Սփյուռքի հայ թատրոնի համար առավել բարդ մի շրջան, երբ անհրաժեշտ են կազմակերպչի ունակություններով օժտված, բեմարվեստի տարբեր ասպարեզներին գիտակ մարդիկ: Արաքսի Օհանյանը թատերական գործչի հենց այդ տեսակն էր. նա թե՛ ռեժիսոր էր, թե՛ դերասան, թե՛ թատերագիր և թե՛ խմբի ղեկավար: Բեմական կյանքի իր քառասուն տարիների ընթացքում Օհանյանն իրականացրեց մոտ երեք հարյուր ներկայացում, որոնց գրական նյութը, եգիպտահայ հանդիսատեսին հիմնականում լինելով անծանոթ, գրավիչ էր իր նորությամբ. «թերևս պետական թատրոն մը չունի նմանօրինակ խաղացանկ մը»,- գրում է «Արաքս» թերթը:

Արաքսի Օհանյանն, այսպիսով, իր գործունեության սկզբնական շրջանում նախապատվությունը տալիս էր դրամատիկ գործերին (Լ. Տոլստոյ, «Հարություն», Ալ. Շիրվանզադե, «Նամուս», Վ. Հյուգո, «Էռնանի», Ալ. Դյումա-որդի, «Քամելիազարդ տիկինը» և այլն): Դրանց զուգահեռ՝ ժանրային առումով միանգամայն տարբեր երկերի ընտրություն, որն իր հակասականությամբ, արտիստուհու մշտական ստեղծագործական որոնումների վկայությունն էր: Օհանյանին, ի վերջո, հետաքրքրում էին անհատի և հասարակության բախումներին առնչվող հարցադրումները: Խնդիրներ, որոնք բխում էին նաև ժամանակի թատրոնի և թատերագրության պահանջներից: Աշխատելով այս ուղղությամբ՝ Օհանյանը հանգեց ողբերգության ժանրին՝ միայն Վ. Շեքսպիրի «Համլետում» (1956) գտնելով իրեն հուզող հարցերի պատասխանը, քանի որ, ինչպես և Սիրանույշը, ուներ իր ներաշխարհում հուզմունքներ, ուներ ասելիք, որոնք չէին կարող արտահայտվել ո՛չ Մեդեայի, ո՛չ Մարգարիտ Գոթիեի, ո՛չ էլ մյուս նշանավոր խաղերով:

Հաջորդ՝ Ի. Զիագոզայի «Սադամ Բաթերֆլայ» և Օ. Ուայլդի «Հովհարը» («Լեդի Ուինդերմիրի հովհարը», 1957) պիեսների բեմադրությունները. լինելով արտիստուհուն հետաքրքրող թեմայի ևս մեկ արտահայտություն, ուշագրավ էին նաև իբրև ռեժիսորական աշխատանք: Այս առիթով էլ «Արևի» թղթակից Պարույր Սասիկյանը գրեց, որ Արաքսի Օհանյանին կարելի է համարել «...հարազատ հաջորդը հայ բեմին մեջ՝ Մեծն Սիրանույշի: (...) Խաղի ընթացքին հասարակությունը կգիտակցեր, թե կգտնվեր իսկական մեծ արվեստագիտուհիի մը դեմ հանդիման»: «Եվ սխալ չէ ըսել,- մեկ այլ առիթով գրում է «Արևը»,- որ միակ պրոֆեսիոնալ դերասանուհին է եգիպտահայ իրականության մեջ: (...) Տիկին Օհանյան - հավատարիմ Սիրանույշներու ավանդությանց - հասած է մակարդակի մը, որ զինք իրավամբ կրնա արվեստագիտուհիի տիտղոսին արժանացնել: Մեր բեմի աշխատավորները պետք է օգտվին Տիկ. Օհանյանի կարողություններեն՝ առավելագույնս»:

Արաքսի Օհանյանը, այսպիսով, արժանացավ Սիրանույշի հաջորդը ճանաչվելու պատվին: Հաստատուն մի իրավիճակի, որը նրան հնարավորություն կընձեռեր լինելու հետևողական ոչ միայն թեմատիկ, այլև ժանրային առումներով: Մինչդեռ «Հովհարին» հետևեց բեմադրությունների մի շարք, որը հակառակի ապացույցն էր և ուներ իր պատճառաբանումը:

1930-ականների վերջերին եգիպտահայերը հնարավորություն ունեցան դիտելու Հ. Բեկնազարյանի «Պեպո» ժապավենը: Կինոնկարը, մեծ հետաքրքրության հետ մեկտեղ, շատերի համար մնաց անըմբռնելի: Հանդիսատեսը, չհասկանալով թիֆլիսահայ բարբառը, դահլիճից հեռանում էր հիասթափված: «Ան չէ ամմա, ի՞նչ լեզու կխոսին կոր»,- հարցնում էին միմյանց: Ֆիլմից ստացած տպավորությունն Արաքսի Օհանյանն ընկալեց իբրև արվեստագետ, որը մշտապես մտահոգված էր հայերենի երկու գրական լեզուների պահպանման և բեմից հնչեցնելու խնդիրներով: Տարիներ անց նա ստանձնեց գործի բեմադրությունն արևմտահայերենով՝ նպատակ ունենալով Սունդուկյանի պիեսը եգիպտահայ հանդիսատեսին ներկայացնելու մատչելի և հասկանալի լեզվով: Դժվարին մի գործ, որն Օհանյանին լիովին չհաջողվեց: Ներկայացումը (1957), զրկվելով ֆունկցիոնալ կարևոր նշանակություն ունեցող թիֆլիսահայ բարբառից, անշուշտ, որոշակիորեն տուժեց: Այսուհանդերձ, «Պեպոն» ունեցավ իր դերը համայնքի թատերական կյանքում: Կատակերգության և օպերետի ժանրերը, որոնք տեղի թատրոնին բնորոշ էին սկզբնավորման իսկ օրերից, Արաքսի Օհանյանի շնորհիվ վերադարձրին իրենց առաջատար դիրքերը եգիպտահայ թատերական արվեստում: Մեկ տարի անց նա բեմադրեց իր իսկ հեղինակած՝ «Սայաթ-Նովա» օպերետը (1958): Ուշագրավ է, որ օպերետի ժանրի ընտրությամբ նույնպես Արաքսի Օհանյանը նմանվեց Սիրանույշին, միայն, ի տարբերություն մեծ դերասանուհու, նա երաժշտական թատրոնով հրապուրվեց իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանում:

Այստեղի հայ թատերական շարժումն սկիզբ է առել XIX դարի վերջերին, երբ Սերովբե Պենկլյանի օպերետային թատերախումբը հյուրախաղերով հանդես եկավ Կահիրեի «Էզբեկիե» և Արքունական օպերային թատրոններում (1895): Տիգրան Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերետը մյուս գործերի կողքին գերեց տեղի հանդիսատեսին: Գլխավոր՝ Ֆաթիմեի դերակատարն էր երիտասարդ Սիրանույշը, իսկ Հոր-հոր աղայի դերում անգերազանցելի էր Ս. Պենկլյանը: Երկրորդ, նույնքան նշանակալից հյուրախաղերից հետո «Լեբլեբիջի Հոր-հոր աղան» դարձավ եգիպտահայ համայնքի թատերական կյանքի մշտական ուղեկիցը, սեփական գլխավոր դերակատարներ ունենալուց բացի (Ռոզա Հովհաննիսյան, Լևոն Շիշմանյան, Արփիար Վարդյան), որոշելով նաև տեղի բեմարվեստի զարգացման հիմնական ուղղությունը: Օհանյանի «Սայաթ-Նովա» օպերետն, այսպիսով, արտիստուհու հերթական ստեղծագործական քայլը լինելուց բացի, նաև եգիպտոսի հայ թատրոնի բնականոն ընթացքի դրսևորումներից էր:

Օպերետն ունեցավ աննախադեպ հաջողություն: Երկու տարի շարունակ չիջնելով համայնքի բեմերից՝ 1960-ին ներկայացվեց Կահիրեի արքունական օպերային թատրոնում հիշեցնելով Ս. Պենկլյանի օպերետային խմբի հյուրախաղերի օրերը: Թատերախոսները, չթաքցնելով իրենց հիացմունքը, դերասաններից յուրաքանչյուրին ներկայացրին Սայաթ-Նովայի երգերից վերցված չափածո տողերով: Գլխավոր՝ Սայաթ-Նովայի դերակատարն էր Վազգեն Փարթամյանը: Նա իր դերերգը կատարեց հատուկ մեղմությամբ, ազգային շեշտադրումով՝ կերպարի հետ հասնելով լիակատար նույնացման: «Մեր գաղութին Սայաթը դարձած է: Ուր որ երթա՝ զայն Սայաթ կկոչեն»:

«Սայաթ-Նովայից» հետո Արաքսի Օհանյանը բեմադրեց Խաչիկ Սանդալջյանի «Սոնյան» (1959): Դրամատիզմով լի մի ստեղծագործություն՝ զվարթ տրամադրություն խոստացող օպերետին հակասող իրադրությամբ: Գործող անձինք չնայած կոզակ զինվորականության միջավայրից են, բնավորության իրենց գծերով, նույնիսկ անուններով հիշեցնում են Ալ. Շիրվանզադեի «Չար ոգու» կերպարներին (մուրացիկ Գիժ Սերգեյ - Գիժ Դանել, Սոնյա - Սոնա, Սոնյայի ծնողները՝ բռնակալ հայր Վասիլը և հոգնատանջ մայրը՝ Տանյա Կատերինովան): Եվ սրա հետ մեկտեղ՝ սիրո մի պատմություն՝ օպերետի համար անսովոր կրքերի դրսևորումներով, որը, սակայն, հերոսների ծանր փորձություններից հետո հանգում է իր բարեհաջող ավարտին:

Ներկայացումը, ազատվելով սյուժետային հիմնական գծից շեղող որոշ մանրամասնություններից, հեռանալով իր առաջին «ասիական օպերետ» հիշեցնող տարբերակից, միայն շահեց՝ ձեռք բերելով ժամանակակից նկարագիր: Մնալով իր սկզբունքին հավատարիմ՝ բեմադրիչը բացահայտեց արտիստական նոր ուժեր: Վազգեն Փարթամյանը, մարմնավորելով Սայաթ-Նովայից միանգամայն տարբեր՝ հիսնապետ Իվան Ալեքսեևի կերպարը, ծայնայինից բացի, դրսևորեց նաև դրամատիկ դերասանի հատկանիշներ: Առաջատար դիրք գրավելով խմբում՝ նա դարձավ համայնքի փնտրված դեմքերից մեկը: «Կսիրենք մենք զայն:- Գրվեց Փարթամյանի մասին:- Իր ծայնի՞ն, խաղարկությա՞ն, թե՛ նկարագրին համար»: Խորեն Տետեյանը, որը համեմատաբար հազվադեպ էր հանդես գալիս այլ խմբերում, հիմնականում մասնակցել է Օհանյանի բեմադրություններին: «Սոնյայում» նա անձնավորեց հարյուրապետ Վասիլի՝ ավանդապահ և պատվախնդիր հոր կերպարը: Ինքը՝ Ա. Օհանյանը, կատարեց Սոնյայի մոր՝ Տանյա Կատերինովայի դերը, իսկ հերոսուհու դերակատարն էր Լուիզ Յագուբյանը՝ հանդիսատեսին գերելով իր «ախորժալուր ծայնով»:

Այսպիսով, օպերետի և կատակերգության ժանրերում հասնելով հաջողության, Արաքսի Օհանյանը նախապատվությունը տվեց այս կարգի գործերին: Ըստ որում, եթե դրամայի և ողբերգության ասպարեզներում նա իրեն դրսևորեց իբրև դերասան, ապա երաժշտական թատրոնում՝ իբրև հմուտ բեմադրիչ: «Սոնյային» հաջորդեցին Գրեմ-Սիմոնի «Դայի Կարապետ կամ Ամերիկահայ փեսացուն» կատակերգությունը (1960), Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» օպերետը (1961) և մի շարք այլ գործեր: Կյանքի վերջին տարիներին Օհանյանը հիմնականում զբաղվեց կազմակերպչական հարցերով: Նա կարողացավ չեզոքացնել եգիպտահայ թատրոնում հնարավոր լճացումն ու անկումը: Արաքսի Օհանյանի և նրա համախոհների ջանքերով թատրոնը շարունակեց գոյատևել արտաշխարհի մեկ հատվածում ևս: Մի երկրում, որտեղ հայ համայնքի թատերական շարժումն իր սկիզբն առավ նաև Սիրանույշի արվեստով, և որն իր հետագա ընթացքը շարունակեց մեծանուն դերասանուհուն արժանի արվեստագետի՝ Արաքսի Օհանյանի շնորհիվ:

Անահիտ ՉԹՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Նկարում. Արաքսի Օհանյանը՝ Համլետի դերում (1956)

Վարպետ Գրիշան 70 տարեկան է

Օրերս լրացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ավտոմատ հեռախոսակայանի կապի բաժնի պետ Գրիշա Պողոսյանի ծննդյան 70 տարին:

Ակադեմիայի համակարգի հնագույն աշխատակիցները ջերմությամբ և սիրով են նշում այս տարելիցը, որովհետև տասնամյակներ շարունակ այդ համեստ, բարեհամբույր, պատրաստակամ և իր գործի հիանալի գիտակ Գրիշա Պողոսյանը նրանց համար եղել է մտերիմ, հոգատար և սրտակից ընկեր՝ մեր Գրիշան:

Գրիշա Պողոսյանը գիտությունների ակադեմիայում սկսել է աշխատել ավելի քան 50 տարի առաջ: Նա և իր եղբայրներն այն տարիներին մոնտաժել և գործի են գցել ավտոմատ հեռախոսակայանը, որը տասնամյակներ շարունակ անխափան ծառայեց ակադեմիայի համակարգի աշխատողներին:

Աշխատանքին զուգընթաց Գրիշա Պողոսյանը սովորեց և ավարտեց Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի բաժինը՝ տեխնիկից աճելով մինչև ինժեներ և ապա կապի բաժնի պետ:

Սիա արդեն 52 տարի ակադեմիայի բակում, մասնաշենքերում կոլեկտիվի անդամները օրվա տարբեր ժամերի տեսնում են վարպետ Գրիշային՝ աշխատանքային կապույտ արտահագուստով, ինչ-որ գործիքներ ձեռքին, բարյացակամ, անբաժան ժպիտը դեմքին, հարկից հարկ, աշխատասենյակից աշխատասենյակ շրջելիս՝ խափանված կապը վերականգնելու առաքելությամբ:

Գրիշա Պողոսյանի թերևս ամենագովելի հատկանիշն իր օգնությանը դիմողներին անմիջապես արձագանքելն է, ըստ որում՝ զարմանալի պատրաստակամությամբ և սիրով:

Նրա ղեկավարած կապի բաժինը սպասարկում է վիթխարի մի տարածք՝ հարյուրավոր հեռախոսներով, շենքից շենք, հարկից հարկ, սենյակից սենյակ անցնող լարերով, որոնցից յուրաքանչյուրի նշանակությունը և ֆունկցիան ինքը գիտի, հիշում է ամենայն ճշգրտությամբ: Եվ չգրված օրենք է. ոչ մի հեռախոս երկար չի լռում ակադեմիայում, երբ այդ անսարքությունից տեղյակ է վարպետ Գրիշան

Այսօր ակադեմիայի համակարգի բոլոր աշխատակիցների անունից սրտանց շնորհավորենք մեր սիրելի վարպետ Գրիշային նրա 70-ամյա հոբելյանի առթիվ, մաղթենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք և անսպառ եռանդ, որպեսզի նա դեռ երկար ծառայի ակադեմիայի կոլեկտիվին, և մենք դեռ երկար վայելենք նրա բարի ներկայությունը:

Լեոնիդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Վերջերս Մոսկվայում ռուսաց լեզվով լույս է տեսել հայտնի արձակագիր Ռոբերտ Կարայանի «Փրկություն» («Спасение») վեպը: Ողջունելի և կարևոր իրադարձություն, քանի որ վեպի թեման մեր ժողովրդի պատմության ամենաճակատագրական պահի՝ Սարդարապատի ճակատամարտի՝ մեր ժողովրդի հերոսական սխրանքի ասքն է, հաղթանակի, որը վիժեցրեց թուրք մարդասպանների դիվային ծրագիրը՝ ոչնչացնել եղեռնը վերապրած մեր ժողովրդի վերջին պատառիկներին: Հայ ժողովրդի համար բախտորոշ այս իրադարձությունները պատկերող պատումի լույսընծայումը ռուսերենով անչափ կարևոր է և ողջունելի: Վերջապես օտար ընթերցողը հնարավորություն կունենա ծանոթանալու թուրք ջարդարարների վայրագություններին և հաղորդակցվելու հայ ժողովրդի ոգու թռիչքին: Ժողովուրդ, որ կարողացավ ուժերի գերագույն լարումով վեր հառնել մոխիրներից և բռունցքվել հանուն հայրենիքի փրկության:

Ողջունելով Ռոբերտ Կարայանի «Спасение» վեպի ռուսերեն հրատարակությունը՝ նպատակահարմար գտանք տպագրելու ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ցավոք արդեն հանգուցյալ, Սևակ Արզումանյանի՝ «Փրկություն» վեպի մասին ժամանակին գրված գրախոսությունը:



Սևակ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Մեծ գոյամարտի վիպականացումը

Ավելի քան մեկուկես տասնամյակի համառ պրպտումների, գեղարվեստական որոնումների արգասիք է «Փրկություն» վեպը: Լուրջ մտահոգացումը հեղինակին տարել է դեպի արխիվային-փաստական նյութի ուսումնասիրությունը, պատմագիտական աղբյուրների հետախուզումները, ժամանակակիցների վկայությունների ու հուշագրական խայտաբղետ գրականության յուրովի զննում-դիտարկումները: Ռոբերտ Կարայանի մոտեցման, նյութի գեղարվեստական մշակման հիմքում ընկած է, անշուշտ, պատմական դեպքերին ու երևույթներին հարազատ մնալու սկզբունքը: Նա անկաշկանդ ու շատ տեղին օգտվում է պատմական վավերաթղթերից, դեպքերի հավաստիության նպատակով դիմում է նշանավոր մարդկանց, քաղաքական ու հասարակական գործիչների ասույթներին, ձգտում է երկի ճշմարտացիությունը հաստատել պատմական ճշմարտության հայտնաբերումով: Համենայն դեպս՝ վիպական գործողությունների մի ամբողջ շղթա՝ զորավար Անդրանիկի հերոսական արարքները, մի կողմից դաշնակցության հետ ունեցած սկզբունքային բախում-տարաձայնությունները, ապա՝ գժտությունը, մյուս կողմից՝ դեպի Բաքվի կոմունան ու Ստեփան Շահումյանի հեղափոխական գործն ունեցած վերաբերմունքը, նրա ռուսական կողմնորոշումը, Սարդարապատի ժողովրդական անօրինակ գոյամարտի դրվագները, մայիսյան դեպքերը, դաշնակցության ավանտյուրայի ու նրա լիկվիդացման որոշ մանրամասներ, 11-րդ բանակի մուտքը Հայաստան, Թուրքիայի կառավարող շրջանների վայրագությունները և, բնականաբար, այս ամենի առնչություններով հանդես եկած իրական-պատմական բազմաթիվ դեմքեր խորապես հավաստի են, ստուգապատում: Վեպի սյուժետային այս տարածքներում հեղինակը հավատարիմ է պատմականությանը: Սակայն, պետք է խոստովանել, որ նա հիմնովին չի տրվում պատմական փաստերին, գերի չի մնում իրական անցքերին և վավերական դեպքերի ընթացքին, երևակայության ուժով հանում է ժամանակի ու պատմության համար կարևորն ու կենսականը: Այստեղ էլ հենց թաքնված է եղել առավել դժվար խնդիրը. չէ՞ որ ողբերգական ու հերոսական այս տարիների դեպքերն ու հերոսները այնպիսի գին ունեն սերունդների կենդանի հիշողության մեջ, այնքան խոր նստվածք են տվել, ավելին՝ այնքան որոշակի ու հաստատուն տեղ են զբաղեցնում մեր պատմության մատյանում, որ փոքր ու մեծ ամեն մի շեղում կդիտվեր պատմության աղավաղում, առաջ կբերեր թեր ու դեմ կարծիքների հեղեղ: Այսինքն, կասկածի տակ կառնվեր գլխավորը՝ պատմական ճշմարտությունը:

Այստեղից և թեմայի բարդությունն ու, դրանով պայմանավորված, հեղինակի ստեղծագործական երկարամյա աշխատանքը:

Միագիծ ու միապլան չէ «Փրկություն» վեպը: Բազմաշերտ ու բազմաճյուղ սյուժետային զարգացմամբ ստեղծագործության մեջ միահյուսվում են՝ մեր ժողովրդի պատմական ճակատագրի դիտակետից՝ այնքան սուր ու դրամատիկ իրադարձություններ, անցքեր ու եղելություններ: Բայց վեպի հանգույցը, անկասկած, Սարդարապատի նշանավոր ճակատամարտի նկարագրությունն է, որը հենց գրողի լուրջ հաջողության և ստեղծագործական հասունության անուրանալի հավաստումն է:

Ստեղծագործությունը ժանրային բնույթով կարելի է կոչել վեպ-ժամանակագրություն: Եվ ժամանակի արտացոլքը՝ ազգային-քաղաքական, հասարակական-բարոյական բնորոշ առանձնահատկություններով, հիմնականում ստացվել է գեղարվեստորեն համոզիչ: Ռոբերտ Կարայանը շոշափելի պատկերներում տալիս է թուրք խուժանի վայրենի ցեղասպանության ծանրածանր պատկերը, հայ աշխատավորական զանգվածների անհուն տառապանքները: Ստեղծագործության գլուխներից մեկի համար բնաբան դարձնելով Վիկտոր Հյուգոյի չափազանց դիպուկ այս նկատումը. «...Ամեն ինչ ավերակների և սգի մեջ է, թուրքերն անցել են այստեղով», Ռոբերտ Կարայանը տեսանելի է դարձնում, հաստատում Ֆրանսիացի մեծ վիպասանի միտքը: Երկիրը լցվել է արյան բաղնիքներով, ժողովուրդը բռնել է գաղթականի երկար ու մաշող ճանապարհը:

Ռոբերտ Կարայանը ցնցող ու ճշմարտացի նկարագրական հնարներով բացահայտում է թուրք կառավարող շրջանների անամոթ քաղաքականությունը. նրանք օրը ցերեկով սպանդ են կազմակերպում, բայց և ապշահար աշխարհի առջև կուրծք ծեծում իրենց անմեղության ու արդարության թմբկահարումով: Իսկ աշխարհը, խոստումնառատ Եվրոպան անտարբեր լսում են մորթվող մի ժողովրդի լացն ու հառաչանքը: Վեպի գաղափարական ու զեղարվեստական ներքին պաթոսի համար անչափ կարևոր է հեղինակային հայացքի հստակությունը, որն արտահայտվում է ժամանակի պատմական մեծ ճշմարտության արտացոլմամբ: Այդ ճշմարտությունն անսքող ու աներկմիտ խոստովանել են հայ ժողովրդի առաջադեմ զավակները՝ Շահումյանն ու Սպանդարյանը, Մյասնիկյանն ու Սարգիս Կասյանը, տասնյակ ուրիշ հեղափոխական գործիչներ: «Հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից կփրկի միայն այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում: Միակ ելքը այդ է, ուրիշը չկա»:

Գեղարվեստորեն բացահայտելով այս ճշմարտության ազգային ու քաղաքական արմատները՝ արձակագիրը կոնկրետ հանգամանքների շիկացումով ցույց է տալիս, թե ինչպես են վեպի գլխավոր հերոսներից մի քանիսը ոչ միայն հարում, այլև ուղղակի պաշտպանում ազգապաշտպան այդ սկզբունքը: Սա մի տեսակ դառնում է հիմնարար, ծրագրային կողմնորոշում և կարմիր թելի պես անցնում վեպի սկզբից մինչև վերջը:

Չափազանց ուշագրավ է զորավար Անդրանիկի կերպարը: Գրողը նրան օժտել է ժողովրդական հերոսի բնավորության գծերով, նրան պատկերել է իր տարերքի մեջ: Հեղինակի նվաճումը պետք է համարել կերպարի զարգացման դինամիզմը: Անդրանիկ զորավարին տեսնում ենք մշտապես շարժման մեջ՝ հերոսական կռիվների կենտրոնում, պայծառատես հավատքով ու ներքին խռովքով, ազգայնական անհեռատես գործիչների հետ սկզբունքային և անհաշտ բախումով: Զորավարն ու մարտիկը՝ մի կողմից, ներդաշնակում են և, լրացնելով իրար, ամբողջացնում մի գունեղ բնավորություն: Նա խոր ապրումներով ու ներքին բարդ անցումներով հոգեբանական կերպար է, հեղինակի փայլուն ձեռքբերումը: Կերպարի թանձրացման գեղարվեստական հնարանքներն են՝ էպիկական գծերի խտացումը, հոգեկան դրամայի ընդգծումը, խոստովանության ու ինքնազննումի միջոցները, և, առհասարակ, հեղինակային անհատականությանը բնորոշ ու վիպական ողջ հյուսվածքում զարմանալի հաջողությամբ օգտագործվող ներքին մենախոսության եղանակը: Գեղարվեստական այս հնարանքը մեծ հմտությամբ և ոչ միօրինակ ձևով կիրառված է նաև Դանիել Բեկ-Փիրումյանի, Արամ Փաշա Սանուկյանի, Դրոյի և ուրիշ կերպարներում...

«Փրկություն» վեպը Ռոբերտ Կարայանի ստեղծագործական նշանակալից հաջողությունն է, հեղինակի հասունությունն ու կարելիությունները վավերացնող և գեղարվեստական նոր որոնումներում հուսալիորեն պարտավորեցնող երկ:

Վեպն անմահացրել է իրական-վավերական մի շարք հերոսների, որոնց կերպարները հերոսության և հայրենասիրության խորհրդանիշներ են, և նրանց միջոցով հեղինակը կենդանի է պահում ժողովրդին ու հայրենիքին անմնացորդ նվիրումի թանկ զգացումները:

«Փրկություն» ստեղծագործության ազնիվ գծերից ու նշանակալից ձեռքբերումներից է հայ եկեղեցու և նրա հոգևոր տերերի հայրենասեր գործունեության արդար վերագնահատումը: Տակավին խորհրդային վարչակարգի տարիներին Ռ. Կարայանը խիզախել է ճշմարտությունն ասել այդ մասին, ցույց տալ, թե Սարդարապատի բախտորոշ հերոսամարտում ինչպիսի անօրինակ դեր խաղաց հայոց առաքելական եկեղեցին:

Ռոբերտ Կարայանի «Փրկություն» վեպը հայ գոյապայքարի գեղարվեստական փայլուն շողարձակումներից մեկն է, որի պատմական և արդիական արժեքը դիմացել է ժամանակի փորձությանը, և ահա շուրջ երկու տասնամյակ ազգությանն անկախության ու ազատության ոգեկոչող նշանավոր երկերի շարքում հաստատել է իր ուրույն տեղը:

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Միքայելի Գեղամյանը:

1949 թ. Գ. Գեղամյանն ընդունվել և 1954 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1954 թվականից աշխատել է Թումանյանի (Ալավերդու) շրջանի Մղարթ գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատել է պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող (1967 թվականից), առաջատար գիտաշխատող (1974 թվականից), բաժնի վարիչ (1994-2005 թթ.), գլխավոր մասնագետ (2005 թվականից): 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը 1953-1958 թթ.» թեմայով: Նրա դոկտորական ատենախոսությունը (1980 թ.) նվիրված էր խորհրդային Հայաստանի 1920-ական թթ. սկզբի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներին («Նէպ-ը և սոցիալ-տնտեսական փոփոխությունը Հայաստանում»): 1981 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Գեղամյանը 1980 թվականից պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ էր: Համատեղության կարգով հայոց պատմություն էր դասավանդում ԵՊՀ-ում, ճարտարագիտական և Հ. Աճառյանի անվան համալսարաններում:

Մի շարք մենագրությունների և 60-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության» դպրոցական և բուհական դասագրքերի ստեղծման աշխատանքներին:

Գուրգեն Գեղամյանը վայելում էր մեծ սեր ու հարգանք ինչպես մասնագետ-պատմաբանների, դասախոսների, այնպես էլ հասարակության ամենալայն շրջաններում: Նա հմուտ պատմաբան էր, ինքնատիպ դասախոս, հրաշալի գործընկեր: Պրոֆ. Գեղամյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հայ պատմաբանների սրտերում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բարձրաձայնենք գիտության մասին

Այն, որ հայկական ԶԼՄ-ում գիտության լուսաբանման խնդիր ունենք, արդեն վաղուց է հայտնի, բայց վերջերս նաև պարզ դարձավ, որ խնդիրը հեշտ հաղթահարելի է. միայն թե ցանկություն լինի: Իսկ ցանկություն կա: Հայաստանում գործող գիտական լրագրողների խմբի համակարգող և անփոփոխ առաջնորդ, Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանն առաջարկում է հունիսի 15-ը հայտարարել գիտության բարձրաձայնման օր: Նպատակ հետապնդելով,որ այդ օրը բոլոր ԶԼՄ-ը նվիրեն գիտության լուսաբանմանը, սույն թվականի հունիսի 15-ին ԳԱԱ նախագահության շենքում հրավիրվել էր մամլո ասուլիս, որի ժամանակ ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադ. Ռադիկ Մարտիրոսյանը խոսեց Հայաստանում գիտության կազմակերպման և պետական ֆինանսավորման մասին: Արեգ Միքայելյանն առաջարկներ ներկայացրեց գիտության ֆինանսավորման այլընտրանքային ձևերի և գիտության հեղինակության բարձրացման վերաբերյալ:

Ակադ. Ռադիկ Մարտիրոսյանն իր ողջույնի խոսքում նշեց, որ շատ է կարևորում լրատվամիջոցների ուշադրությունը գիտության հանդեպ: Եվ չնայած այն հանգամանքին, որ վերջին 20-25 տարիների ընթացքում գիտնականի և գիտության հեղինակությունը մեր երկրում ընկել է, այսօր բավականին արդյունավետ քայլեր են արվում առաջացած խնդիրները հաղթահարելու ուղղությամբ: ՀՀ ԳԱԱ նախագահը կարևորում է այդ գործում երիտասարդների ներգրավվածությունը, իսկ դրա համար, հայտնի բան է, պետք է, որ ոլորտը գրավիչ լինի, և դա պիտի ապահովեն բուհերը, ինստիտուտները: Բացի այդ առկա են որոշակի սոցիալական խնդիրներ, որոնց լուծումն էլ պետք է ստանձնի պետությունը: Ու երբ այս երկուսը լինեն, ինչպես նաև լինի գիտության պատշաճ լուսաբանում, մենք կհասնենք ցանկալի արդյունքի: Չնայած առկա դժվարություններին հատկապես հիմնարար գիտության ոլորտում այնուամենայնիվ մեր երկրում գիտությունը շարունակում է զարգացում ապրել, նորանոր ձեռքբերումներ ունենալ: Սա փաստում են բազմաթիվ անկախ միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների կողմից տրված գնահատականները հենված վիճակագրական տվյալների վրա: Եվ սա ընդունենք որպես ոչ շահագրգիռ կողմի օբյեկտիվ գնահատական: Այդպիսիների շարքում պարոն Մարտիրոսյանն առանձնացրեց UNESCO-ի 5 տարին մեկ լույս տեսնող հաստափոր (600էջ) զեկույցը: Այս ժողովածուն նվիրված է գիտության աշխարհում ձեռքբերումներին և պատրաստվում է UNESCO-ի վիճակագրական ինստիտուտի կողմից: Այս ձեռնարկի վերջին համարում, որ լույս է տեսել 2010թ., մեր տարածաշրջանի, այն է՝ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների շարքում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան, Թուրքիա, Իսրայել) Հայաստանն առաջինն է իր գիտական արդյունքով՝ 544 միավոր, որն ավելի նշանավոր ու գնահատելի է դառնում, երբ համեմատում ենք, օրինակ, հարևան Ադրբեջանի 292, կամ Ղազախստանի 218 միավորի հետ. այս էլ այն դեպքում, երբ ամեն տարի գիտության ֆինանսավորման համար մեր երկրում տրամադրվում է 23 մլն, Ադրբեջանում՝ 114 մլն և Ղազախստանում՝ 384 մլն ԱՄՆ դոլար, իսկ հետազոտողգիտնականների թիվը բաշխվում է 4114, 11200 և 10700-ի՝ համապատասխանաբար: Հարկ է նշել նաև, որ հայկական գիտական արդյունքի կեսից ավելին ապահովվում է միջազգային գիտական համագործակցության միջոցով, քանի որ Հայաստանում ՀՆԱ-ի միայն 0.24 %-ն է ուղղվում գիտության զարգացմանը (Եվրոպա- 2 %, ԱՄՆ - 2,5%):

Մեր երկրում գիտության զարգացման հիմնական ուղղություններն են ֆիզիկան, մաթեմատիկան, ինֆորմատիկան, քիմիան ու կենսաբանությունը:

ՀՀ ԳԱԱ նախագահը մեկ այլ ձեռքբերման մասին էլ հայտնեց: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի երեք ինստիտուտներ շահել են ԵՄ գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացման 7-րդ շրջանակային ծրագրի (FP7) դրամաշնորհները: Յուրաքանչյուր ինստիտուտի կհատկացվի 500 հազ. եվրո : Դրամաշնորհները շահել են Հայաստանի ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները և էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնը:

Հարկ է հիշել մեկ այլ հետաքրքիր ծրագրի մասին նույնպես. «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» ֆեյսբուքյան նախաձեռնությունը 2011թ. մայիսի 25-ին հայտարարել էր .Ազդեցության գործակից-IF ունեցող միջազգային գիտական ամսագրերում տպագրություններ ունեցող երիտասարդ գիտնականների խրախուսման ծրագրիե մեկնարկը: 133 երիտասարդ գիտնական մասնակցության հայտ է ներկայացրել, տվյալները ստուգվել են, և համապատասխան մեթոդաբանությամբ հաշվարկվել է ազդեցության գործակից ունեցող յուրաքանչյուր հոդվածին հասնող խրախուսավճարը:

Ծրագրի ֆինանսավորման համար զգալի գումար է հատկացրել «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամը: Մրցանակաբաշխությունը կայացավ սույն թվականի հունիսի 10-ին, և 100-500 հազարական դրամ խրախուսավճարներ ստացան 95 երիտասարդ գիտնական-հետազոտողներ:

Պարոն Միքայելյանը խոսեց գիտության ոչ բավարար լուսաբանման մասին՝ իրավացիորեն փաստելով, որ այսօր հայկական ԶԼՄ-ում սպորտային ոչ այնքան կարևոր իրադարձություններն ավելի շատ են լուսաբանվում, քան գիտության ձեռքբերումները: Գիտության մասին խոսելիս էլ Հայաստանի ԶԼՄ-ն նախընտրում է տեղեկացնել հանրությանը գիտության բնագավառի խնդիրների, ինտրիգների, անհամաձայնությունների, այլ ոչ ձեռքբերումների և գյուտերի մասին: Գիտության վարկանիշը մեծ չափով պայմանավորված է գիտության տարբեր ոլորտների վերաբերյալ հանրության տեղեկացվածության ցածր մակարդակով:

Այս խնդրի լուծման համար Աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանն առաջարկեց գիտական հիմնարկներին որոշակի պարբերականությամբ մամլո հաղորդագրություններ տարածել ձեռքբերումների և նոր համագործակցությունների մասին: Բացի այդ մեկ այլ խնդիր էլ կա. ոչ մի բուհում չի դասավանդվում գիտական լրագրություն առարկան: Իսկ ինչ վերաբերում է գիտության ֆինանսավորման հետ կապված հարցերին, պարոն Միքայելյանն ավելի իրատեսական մոտեցում ունի. նա գիտակցում է, որ այսօր անհնար է այն հինգ անգամ ավելացնելը, քանի որ այդչափ կտրուկ աճի համար պետությունը համապատասխան ֆինանսներ չունի: Փոխարենը գիտնականն առաջարկում է այլընտրանքային տարբերակ դիտարկել, օրինակ՝ փոխառել ամերիկյան փորձը, որտեղ գիտության ֆինանսավորման միջոցների 1/3-ը հովանավորչական բնույթի են, տրամադրվում են գործարարների կողմից, որոնց համար գործում է օրենք հովանավորչության վերաբերյալ, և հովանավորներն ազատվում են որոշակի հարկերից:

Ինչպես տեսանք, Հայաստանում գիտությունը ոչ միայն չի դադարել զարգանալ, այլև թևակոխել է նոր հնարավորություններ խոստացող, համեմատաբար ավելի շատ ֆինանսավորման ու միջազգային համագործակցությունների փուլ:

Եվ, իսկապես, նպատակին հասանք. այդ օրը բազում լրատվամիջոցներ միաժամանակ տեղեկատվություն հաղորդեցին գիտության խնդիրների, գիտության և գիտնականների հեղինակության անկման, գիտական գործունեության օժանդակության բացակայության, գիտության ցածր ֆինանսավորման, բայց և գիտական ձեռքբերումների, հաղթանակների, նոր նախագծերի, հայ գիտնականների շահած դրամաշնորհների, գիտության ոլորտում միջազգային համագործակցության նոր հնարավորությունների և հարակից այլ հարցերի մասին:

Հայ ազգը, որ ունեցել է և ունի պայծառ գիտական միտք, պիտի միշտ գնահատի ու հպարտանա իր գիտական ձեռքբերումներով:

Անի ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թագավորն ու կաթողիկոսը պատմության դատաստանի առջև

Խոսքը վերաբերում է Անիի հայոց (Բագրատունյաց) թագավորությանը, որը 1045 թ. այլևս ու մեկընդմիշտ վայր է իջնում հայոց պատմության թատերաբեմից: Մի ողբերգական դրամա, որն սկսվել էր վաղուց և իր տրամաբանական ավարտին հասավ վերոնշյալ թվականին: Ընկավ Անին, ընկավ Անիի հզոր փառքը, հայոց պետականությունը ստացավ ողնաշարի ոչ թե հերթական վերքը, այլ անբուժելի ու մահացու հարված:

1045 թ. հետո Հայկական բարձրիկ լեռնաշխարհում այլևս պետականության արևը չի ծագի ընդհուպ մինչև 20-րդ հարյուրամյակ 1918-20-ական թվականները:

Պատմության էջերում բազմիցս քննվել ու քննարկվել է Անին Բյուզանդական կայսրությանը կտակելու առեղծվածը: Պատճառներից ու հետևանքներից զատ, վեր է խոյանում հեղինակների հարցը. ովքեր՞ և ինչու՞...

Պատմական երկու դեմքեր, խոշոր անհատներ մշտապես կանգնում են պատմության ու սերունդների առջև: Նրանք են հայոց արքա Հովհաննես-Սմբատ Բագրատունին և հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը: Որոշ վկայություններ կան, որոնք հավաստում են, որ կաթողիկոսը Տրապիզոն քաղաքում բյուզանդացի կայսեր հետ վարած բանակցություններում առավելապես հենվել է թագավորի հանձնարարականների վրա և կատարել վերջինիս կամքը, այն է՝ հայոց կողմը հանձն էր առնում Անին կտակել Բյուզանդական կայսրությանը:

Հիշատակելի է հետևյալ փաստը: Տրապիզոնում ամոթալի գործարքը կնքելուց հետո Պետրոս Գետադարձը անմիջապես չվերադարձավ Անի, այլ ավելի քան չորս տարի մնաց Արևմտյան Հայաստանում (Բյուզանդիային ենթակա հատվածում): Ակներև է, որ խիստ սրվել ու լարվել էին հարաբերությունները կաթողիկոսի և թագավորի միջև: Սակայն այդ ամենը՝ թագավորի ուշացած զգաստությունն ու իրավիճակի սթափ ընկալումը, այլևս ի զորու չէին փոխելու հայոց պատմության հետագա ընթացքը:

Ժամանակի մեծ ու փոքր հակասություններով, գժտություններով ու պառակտումներով լեցուն միջավայրը ծնել էր համազգային մեծ ողբերգությունը, որը շուտով ի կատար էր ածվելու Անիի անկմամբ: Բյուզանդական խորամանկ դիվանագիտությունը ճարպկորեն խաղարկեց Հովհաննես-Սմբատի կտակը՝ հուսահատության մատնելով հայոց արքունական ու հոգևոր շրջանակներին:

Այն պահին, երբ Կոստանդնուպոլիս հրավիրված Գագիկ 2-րդ արքան հայտնվեց բյուզանդական գերության ճիրաններում, Անիում էլ ավելի սրվեց բարդ ու լարված իրավիճակը, և առավել գերակա դարձան հուսահատական ու պարտվողական տրամադրությունները: Այս իրավիճակում կաթողիկոսը ոչ միայն չնպաստեց հայրենասիրական ուժերի միավորմանը, այլև իր գործողություններով փութացրեց քաղաքի հանձնման գործընթացը:

Ի վերջո, Բագրատունիների թագավորության մայրաքաղաքն ընկավ հակառակորդի ձեռքը: Կարճ ժամանակում քրիստոնյա կայսրության կառավարիչները ցույց տվեցին իրենց գաղութարարական քաղաքականության իսկական դեմքն ու ձեռագիրը: 1046 թ. աշնանը բյուզանդական նոր կուսակալը՝ Կատակոլոն Կեկավմենոսը, Անիից հեռացրեց հայոց կաթողիկոսին հայտարարելով, թե կայսրը հրամայել է, որ վերջինս հաստատվի Արծն քաղաքում: Այսինքն՝ թագավորի գահազրկումից հետո մեկուսացվում էր հայոց ինքնուրույնության երկրորդ խորհրդանիշը՝ կաթողիկոսը:

Արծն ուղևորված կաթողիկոսին արգելափակված պահեցին մինչև 1047 թ. կեսերը, որից հետո փոխադրեցին Կոստանդնուպոլիս: Այստեղ երեք տարի պահելուց հետո նրան թույլատրում են բնակություն հաստատել Սեբաստիայում:

Թեև բյուզանդացիները հայոց կաթողիկոսի հետ վարվում էին այնպես, ինչպես կամենում էին, այնուամենայնիվ որոշ փաստեր վկայում են, որ նաև նրանից զգուշանում էին, քանզի հունասեր կաթողիկոսը զղջացել էր իր կատարածի համար և հավանաբար հոգու խորքում որդեգրել էր նոր դիրքորոշում: Այդ է վկայում պատմիչ Արիստակես Լաստիվերցու այն տեղեկությունը, թե բյուզանդացիները բռնի պահում էին կաթողիկոսին, քանզի կասկածում էին՝ եթե նա հասնի հայրենիք. «թե երթեալ ապստամբեցուցանէ զԱնի» («Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերցւոյ», Եր., 1963, էջ 82):

Ահա այսպիսի տխուր, ողբերգական ճակատագիր բաժին հասավ հայոց կաթողիկոսին, որն անհրաժեշտ իմաստնությունը չունեցավ ժամանակին նկատելու և գնահատելու բյուզանդական նենգ քաղաքականության հնարավոր կործանարար հետևանքները: Ի վերջո, ինչի՞ հասան Հովհաննես-Սմբատ արքան և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: Ավելի քան 10 հարյուրամյակ է անցել նրանց գործունեության ժամանակաշրջանից, սակայն մինչև օրս նրանք հեռակա կարգով շարունակում են մնալ պատմության և հայոց սերունդների բարոյական դատաստանի առջև:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԱՅԺՄ ԷԼ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԹԱԼԱՆԻ ԵՎ ՓՈՇԻԱՅՄԱՆ ԷՆԹԱՐԿԵԼ ՀՀ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը № 4-5 -ում)

Ինչպես արդեն գրվել է, Հրազդանի հանքավայրը տեղադրված է Հրազդան քաղաքի անմիջական հարևանությամբ՝ նրա արևելյան ծայրամասում, որտեղ կառուցվել և այժմ էլ կառուցվում են բնակելի տներ: Այդ հանքավայրն ամենափոքրն է նկարագրվածներից, և մենք խորհուրդ չենք տալիս սկսել դրա շահագործումը:

Շահագործման ենք առաջարկում Աբովյանի և Սվարանցի հանքավայրերը, որոնց այժմյան շահագործումը և հանքաքարերի մետալուրգիական փուլով վերամշակումը ծայր աստիճանի անհրաժեշտություն են Հայաստանի Հանրապետության համար թե՛ տնտեսական և թե՛ ռազմավարական առումով:

Սև մետալուրգիայի զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում բավականին մեծ են: Հայաստանում առկա են ոչ միայն նշված հանքավայր-հանքաերևակումները, այլև մոտ 100-ի հասնող այլ հանքաերևակումներ, որոնց մի մասը, եթե ոչ կեսը, ապա գոնե մեկ տասներորդ մասը, կարող է դառնալ հանքավայր և համալրել մեր հանրապետության երկաթ մետաղի պաշարները: Միայն հետախուզման և շահագործման առաջարկվող 4՝ Աբովյանի, Սվարանցի, Թթուջուր–Մարտունու և Կամաքարի հանքավայր–հանքաերևակումների հանքաքարերի ռեսուրսները կազմում են 3,52 մլրդ տ, իսկ երկաթ մետաղինը՝ 1,11 մլրդ տ:

Աբովյանի և Սվարանցի հանքավայրերի շահագործման աշխատանքներն առաջարկվում է կատարել զուգահեռաբար, իսկ նշված երկու՝ Թթուջուր-Մարտունու և Կամաքարի հանքաերևակումներինը՝ աստիճանաբար, Սվարանցի հանքավայրի պաշարների սպառումից հետո: Այդպես շահագործելու պարագայում լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունները կարող են գործել առնվազն 300 տարի:

Մետալուրգիական գործարան առայժմ առաջարկվում է կառուցել միայն մեկը և այն էլ Սյունիքի մարզի Գորիսի շրջանի Շինուհայր նախկին բանվորական ավանի տարածքում (չհասած Սվարանցի հանքավայր մոտ 13 կմ): Այդ տարածքով է անցնում Երևան–Գորիս–Կապան, Մեղրի–Իրան ավտոմայրուղին, այդ տարածքով է անցնելու Իրան–Հայաստան նախագծվող երկաթուղին, այդ տարածքում է գործում Սիսիան–Գորիս հիդրոէլեկտրակայանների Որոտանի կասկադը, այդ տարածքով է անցնում Իրան–Հայաստան մագիստրալ գազատարը, որոնք էլ ապագա մետալուրգիական գործարանին կարող են ապահովել վառելիքով, էլեկտրաէներգիայով, արտադրանքների փոխադրման տրանսպորտով ու ճանապարհներով: Սվարանցի հանքավայրի տարածքում՝ Սվարանց գյուղի մոտակայքում, առաջարկվում է կառուցել երկաթի հանքաքարերի հարստացման ֆաբրիկա, որի կողմից թողարկված խտանյութերը մետալուրգիական փուլով վերամշակման համար պետք է փոխադրվեն Շինուհայրի մետալուրգիական գործարան:

Աբովյանի հանքավայրի շահագործման պարագայում առաջարկվում է թողարկել երկաթի և ապատիտի խտանյութեր, որոնք էլ մետալուրգիական փուլով վերամշակելու և բոլոր օգտակար տարրերը կորզելու համար պետք է ուղարկվեն Շինուհայրի մետալուրգիական գործարան:

Համոզված ենք, որ մինչ մետալուրգիական գործարանի նախագծման և կառուցման աշխատանքների ավարտը, մինչ հանքավայրերի շահագործման աշխատանքների սկիզբը Իրան–Հայաստան երկաթուղին արդեն իսկ կառուցված կլինի:

Մետալուրգիական գործարանը պետք է կառուցվի՝ առաջավոր երկրների տեխնիկայի և տեխնոլոգիաների ժամանակակից նվաճումները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի մշակումները հաշվի առնելով, այնպես, որ երկաթի հանքաքարերից (խտանյութերից) բարձր տոկոսներով կորզվեն բոլոր, կամ հնարավորինս մեծ թվով օգտակար տարրեր, ինչպես նաև հնարավորություն ընձեռվի կորզված տարրերի որոշակի մասը (ըստ պահանջարկի) զտելու և գերզտելու համար: Նորից նշենք, որ զտված ու գերզտված տարրերի արժեքը տասնապատիկ ու հարյուրապատիկ գերազանցում է իրենց իսկ սովորական տեսակների արժեքը:

Եթե, ինչպես նշել ենք, Աբովյանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանվի և մշակվի 5 մլն տ հանքաքար, ապա կստացվի 1625 հազ.տ խտանյութ, որի մեջ կլինեն՝ ցերիում՝ 78741տ, լանտան՝ 15748տ, իտրիում՝ 1968տ, արծաթ՝ 19,4տ, գալիում՝ 11,81տ, լիթիում՝ 11,81տ, երկաթ՝ 1068,5 հազ.տ:

Սվարանցի հանքավայրի շահագործման պարագայում տարեկան 10 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու դեպքում կարող է ստացվել 3300 հազ.տ խտանյութ, որի մեջ կլինեն՝ վանադիում՝ 4760տ, թալիում՝ 17տ, ինդիում՝ 20,4տ, բերիլիում՝ 136տ, տանտալ՝ 170տ, նիոբիում՝ 285,6տ, տիտան՝ 61200տ, մագնեզիում՝ 1020 հազ.տ, գերմանիում՝ 8,1տ, գալիում՝ 67,3տ, սելեն՝ 4,5տ, տելլուր՝ 6,73տ, բիսմուտ՝ 202տ, հազվագյուտ հողատարրեր՝ 340տ, երկաթ՝ 1360տ:

Այսպիսով, Շինուհայրի մետալուրգիական գործարան կուղարկվեն տարեկան 4 մլն 925 հազ.տ խտանյութեր, որոնց մեջ կլինեն՝ ցերիում՝ 78741տ, լանտան՝ 15748տ, իտրիում՝ 1968տ, արծաթ՝ 19,4տ, գալիում՝ 79,11տ, լիթիում՝ 11,8տ, վանադիում՝ 4760տ, թալիում՝ 17տ, ինդիում՝ 20,4տ, բերիլիում՝ 136տ, տանտալ՝ 170տ, նիոբիում՝ 285,6տ, տիտան՝ 61200տ, մագնեզիում՝ 1020 հազ.տ, գերմանիում՝ 8,1տ, սելեն՝ 4,5տ, տելլուր՝ 6,73տ, բիսմուտ՝ 202տ, հազվագյուտ հողատարրեր՝ 340տ, երկաթ՝ 2.428.500տ:

Եթե մետալուրգիական փուլով վերամշակման պարագայում երկաթ հիմնական մետաղը կորզվի 98%–ով, իսկ երկաթի հետ հարակից տարածված տարրերը՝ 90%–ով, ապա մետալուրգիական փուլից հետո ստացված մետաղների և ոչ մետաղային օգտակար տարրերի քանակները կլինեն՝ ցերիումինը՝ 70867տ, լանտանինը՝ 14173տ, իտրիումինը՝ 1771տ, արծաթինը՝ 17,5տ, գալիումինը՝ 71,2տ, լիթիումինը՝ 10,63տ, վանադիումինը՝ 4284տ, թալիումինը՝ 15,3տ, ինդիումինը՝ 18,4տ, բերիլիումինը՝ 122,4տ, տանտալինը՝ 153տ, նիոբիումինը՝ 257տ, տիտանինը՝ 55080տ, մագնեզիումինը՝ 918000 հազ.տ, գերմանիումինը՝ 7,3տ, սելենինը՝ 4տ, տելլուրինը՝ 6,1տ, բիսմուտինը՝ 181,8տ, հազվագյուտ հողատարրերինը՝ 306տ, երկաթինը՝ 2.379.930տ: Այս պարագայում լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունների ստացած տարեկան հասույթը կարող է կազմել 7 մլրդ 159 մլն դոլար: Եթե կորզվող 2.379.930տ երկաթ մետաղի գոնե 10%–ը՝ 237993տ, միջազգային շուկա դուրս բերվի զտված ու մաքրված վիճակով, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է աճել 3 մլրդ 927 մլն դոլարով և կազմել 11 մլրդ 086 մլն դոլար:

Նշենք, որ Հայաստանը, ինչպես ԽՍՀՄ-ի օրոք, այնպես էլ այժմ, տարեկան ներկրում է սև մետալուրգիայի մեկ մլն տոննայից ավելի արտադրանք, որոնց համար միայն որպես փոխադրական ծախսեր վճարում է միլիոնավոր դոլարներ: Սև մետալուրգիան Հայաստանում զարգացնելու պարագայում ոչ միայն կարող ենք բավարարել մեր սեփական պահանջները, այլև մեծաքանակ արտադրանքներ ու մետաղներ արտահանել հարևան երկրներ և Հայաստան բերել միլիարդավոր դոլարների հասնող հասույթ:

Յու.Աղաբալյանի (1991) կողմից Հրազդանի փոքր հանքավայրի օրինակով կատարված տեխնիկատնտեսական հիմնավորմամբ հաստատվել է, որ մեկ տոննա մաքուր երկաթից ստացված տեսակարար շահույթը կազմում է գնի 56,5%-ը:

Վերոնշյալից ելնելով՝ առաջարկվում է.

հենց այժմ, առանց հապաղելու ձեռնարկել ՀՀ երկաթի առաջնահերթ շահագործման առաջարկվող երկու հանքավայրերի՝ Աբովյանի և Սվարանցի հանքաքարերի հարստացման և ապա մետալուրգիական փուլով վերամշակման տեխնոլոգիական հետազոտություններ: Հետազոտությունները անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով բոլոր օգտակար տարրերի կորզումները՝ ինչպես հանքահարստացման, այնպես էլ մետալուրգիական փուլերով բարձր տոկոսներով, այնպես, որ միջավայր թափվող հարստապոչերը լինեն միանգամայն մաքուր և անվտանգ: Այդ աշխատանքների մեջ պետք է ներգրավել ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիան, որը բավականին մեծ փորձառություն ունի նշված գործերում և շատ օգտակար կարող է լինել ՀՀ սև մետալուրգիայի զարգացման գործում: Այդ աշխատանքների բարեհաջող ավարտից հետո անհրաժեշտ է ձեռնարկել լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունների նախագծման աշխատանքներ և անցնել ձեռնարկությունների կառուցմանը: Որքան շուտ կառուցվի և գործի սև մետալուրգիայի հայկական ձեռնարկությունը, այնքան հարուստ և ռազմավարական առումով անվտանգ կարող է լինել մեր երկիրը: Կունենանք նաև հազարավոր նոր աշխատատեղեր:

Ս.թ. փետրվարի 25-ին «Արմենիա» հեռուստաալիքով հաղորդում տրվեց այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության հետ պայմանավորվածություն կա Գյումրիում ինքնաթիռների մասերի արտադրություն կազմակերպելու համար: Եթե այդ պայմանավորվածությունը ստույգ է և պետք է իրագործվի, ապա սև և գունավոր մետալուրգիական գործարանների առկայության հարցը դառնում է անվիճելի, և այդպիսիք պետք է կառուցվեն, որպեսզի պահանջվող քանակի սև և գունավոր մետաղները ոչ թե ներկրվեն հազարավոր կիլոմետրեր հեռավորությունից, այլ ունենանք տեղում:

Վաղը ինքնաթիռի մասեր ենք արտադրելու, մյուս օրն անհրաժեշտ է լինելու ինքնաթիռ և ուղղաթիռ արտադրել, հետո՝ ավտոմատ, փամփուշտներ, հրթիռներ, հրետանի, տանկ և այլն: Այդ բոլորի համար մեզ անհրաժեշտ է լինելու ունենալ երկաթ, տիտան, վանադիում, նիկել, կոբալտ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ալյումին, սկանդիում, բերիլիում և այլ մետաղներ ու ոչ մետաղական տարրեր, որոնք առատորեն առկա են մեր երկաթաքարային, պղնձամոլիբդենային, ոսկի–բազմամետաղային և մյուս հանքավայրերում: Դե՛, ուրեմն, եկեք այնպես աշխատենք, որ այդ բոլորն ունենանք և ոչ թե նվիրենք օտարներին:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

...Նաև ստրատեգիական նշանակություն...

Առաջարկվող աշխատանքը չի վերաբերում զենքերին, զրահներին, պայթուցիկ նյութերին, այլ ընդամենը սննդի տեսակներից մեկին՝ հավկիթին: Վերջինս ունի բազմաթիվ մշակման եղանակներ՝ նպատակը՝ երկարաձգել նրա պահպանման ժամկետները: Դրանցից մեկն է ձվի ընկղմումը հալած պարաֆինի մեջ, որից հետո այն մշակվում է օզոնով:

Հայտնի է նաև հավկիթի մշակումը ջրածնի պերօքսիդով և կալցիումի հիդրօքսիդով: Հայտնի է նաև ամենատարածվածը՝ տեսակավորել և պահպանել սառնարանի մեջ:

Նշված միջոցները չունեն հավկիթի պահպանման մեծ ժամկետներ: Ժամանակին մեր կողմից առաջարկվեց մի այնպիսի եղանակ, որ երկարացվեն պահպանման ժամկետները:

Ուսումնասիրությունների համար ընտրվել է գարնանային +7 մինչև +35°C ջերմաստիճանը՝ ընդգրկելով ձմռան ամիսները:

Հետազոտությունների համար ընտրվեց 3-10 % հեղուկ: Եթե անհրաժեշտ է ձուն պահպանել, օրինակ՝ 40 օր, ուրեմն ընտրվում է 1% հեղուկ: Իսկ եթե անհրաժեշտ է պահպանել 130 օր, համապատասխանաբար լուծույթի խտությունը մեծացվում է, իսկ 255 օրվա համար ընտրվում է լուծույթի 10% խտությունը: Հենց սկզբից արձանագրենք՝ այս հետազոտությունների ընթացքում ձվի որակի փոփոխություն չի նկատվում, սպիտակուցը և դեղնուցը չեն կորցնում համը, հոտը և տեսքը:

Այս աշխատանքների համար ԽՍՀՄ գյուտերի պետական կոմիտեի կողմից 1991 թ. ստացվել է հեղինակային վկայական:

Երբ ես այս աշխատանքով ներկայացա Մինիստրների խորհրդի համապատասխան բաժին, ինձ ուրախացրին՝ նկատելով, որ այս գյուտն ունի ստրատեգիական մեծ նշանակություն: Եվ իսկապես, պատերազմի (Աստված մի արասցե), շրջափակման, արտակարգ իրադրության ժամանակահատվածում 8-8,5 ամիս պահպանելով ձուն, մեծ նպաստ կբերենք հասարակության սննդի ապահովման գործում:

Ես այս գյուտի մասին հիշեցի, երբ հենց վերջերս Հայաստանում զգացվեց հավկիթի պակասություն, և մի խումբ մենաշնորհներ, օգտվելով իրավիճակից, հավկիթի գինը բարձրացրին աներևակայելի չափերի:

Ի դեպ, նշեմ նաև, որ 1000 ձվի համար լուծույթի ծախսը կազմում է մի քանի լումա:

1990 թվականին արված գիտական հետազոտությունների շնորհիվ մեր կողմից իրականացված և ստացված այս եղանակը պահանջարկ ունի նաև այսօր:

Առաջարկված գյուտը հնարավոր է դարձնում մեկուսացնել բակտերիաները, արգելակել նրանց թափանցումը ձվի ներքին շերտերը և ապահովել մարդկանց անվտանգությունը տարբեր հիվանդություններից:

Ավելորդ չեմ համարում փաստել, որ ժամանակին ԽՍՀՄ-ի սանիտարական գլխավոր վարչության թույլտվությամբ լուծույթը փորձարկվել և կիրառվել է սննդի, անտիբիոտիկների, թթուների և այլ արտադրությունների մեջ:

Ռիմա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

«Պարույր Սևակի ծնունդը մեր կյանքի, մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ, ճշմարտապես, մի «Եղիցի լույս»: Պարույր Սևակն այնպիսիներից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, որքան ապրել է հայ ժողովուրդը, իսկ հայն անմահներից մեկն է աշխարհում»:

ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Պարույր Սևակի հիշատակին

«Բա՛րև, Պարո՛ւյր: Ես քեզ ասում եմ բարև և գիտեմ, որ ի պատասխան կլսեմ քո ձայնը...»: Ահա այսպես, մայիսի 30-ին սկսվեց հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի ողբերգական մահվան 40-ամյակին նվիրված միջոցառումը, որ կազմակերպել էին ԳԱԱ մագիստրատուրայի բաժնի մի խումբ ուսանողներ՝ գիտակրթական կենտրոնի ուսումնական մասի գլխավոր մասնագետ Նարինե Վարդանյանի և հոգեբանության ամբիոնի դասախոս Մարինա Սահակյանի նախաձեռնությամբ:

40 տարի առաջ ճակատագրական վթարը կտրեց մեծ բանաստեղծի, անգերազանցելի բառագետի, լեզվագետ-փիլիսոփայի, մարդկային հոգու անկրկնելի գիտակի և վերլուծի՝ մեծն Պարույր Սևակի կյանքի թելը: Այս անգամ էլ անողոք ճակատագիրը մի անբացատրելի և դաժան խաղ խաղաց հայի գլխին և... «Ատում եմ ձյունը, թե նա տեղում է ամառվա կեսին»: Եվ այս անգամ իսկապես ձյունը տեղաց ամառվա կեսին՝ հունիսի 17-ին:

Այսօր նա չկա: Բայց կան նրա «Անմահները հրամայում են», «Սիրո ճանապարհը», «Անլռելի զանգակատունը»: Նա սիրվեց ու մնաց ժողովրդի մեջ, նրա կյանքի ու հիշողության մեջ: Սևակ կարդացել են ու սիրել նրա ժամանակակիցները, Սևակ կարդում ու սիրում ենք մենք. Սևակ կարդալու ու սիրելու են գալիք սերունդները: Սևակը համակ սեր է: Սեր դեպի գրականությունը: Եվ հենց այս սերն էլ ևս մեկ անգամ միավորեց հայ երիտասարդներին:

Միջոցառմանը ներկա էին Պարույր Սևակի տուն-թանգարանի տնօրեն Ավետիք Գրիգորյանը, ժողովրդական երգչուհի Գայանե Ներսիսյանը, գիտակրթական կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը և շատ ուրիշներ, որոնք ողջունեցին ուսանողների նմանօրինակ նախաձեռնությունը՝ մաղթելով նրանց հետագա հաջողություններ և ձեռքբերումներ:

Հայարփի ԴԱԼԼԱՔՅԱՆ
ԳՄԿ մագիստրատուրայի լրագրության I կուրսի մագիստրանտ



ՊԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ

Չգիտեմ՝ ի՞նչ անեմ:
Պարեպատ եմ զարկվում:
Հազար բան եմ փնտրում՝ կույրի նման,
Ու հասկացած նրա ինչ-ինչոցը՝ կրկին
Պարեպատ եմ զարկվում:
Չգիտեմ՝ ի՞նչ անեմ:

Եվ իմ ներսի ձայնը
Խաղաղությամբ մի բութ
Սկսում է ճնշել ու մամլել ինձ այնպե՛ս,
Որ ես քիչ է մնում «հե՛յ-հե՛յ» գոռամ՝
Նախրապանի նման կամ հովվի պես.
Թո՛ղ իմ հոտ ու նախրի մտքովն անգամ
չանցնի.
Թե անտեր են իրենք:
«Հե՛յ-հե՛յ» կանչելն, անշո՛ւշտ,
Նո՛ւյնպես գործ է:
Բայց ես հո չեմ կարող
Անվերջ «հե՛յ-հե՛յ» կանչել:
Ուրի՛շ գործ եմ ուզում:

Նրա փոշին սրբել իրենց պոչո՛վ:
Ահա նրանք, այո՛, բեռ են դարձել հիմա
Այս քո փոշփացող մեքենայի համար,
Որ և այսօր, խնդրե՛մ, քո դարավոր
Փոխադրականդ է փոխադրում...

Բեռնամեքենայի թափքում՝ ձիե՛ր,
Վախից կծի՛կ դարձած,
դողդողացո՛ղ ձիեր,
Ամեն շրջադարձի ու կեռմանի վրա
Մե՛զ պես (մարդո՛ւ նման) ճկվողթեքվո՛ղ,
Մե՛զ պես (և ավելի՛) զգուշացո՛ղ ձիեր...
Ես ձեզ այդ վիճակից ինչպե՞ս
հանեմ, ձիե՛ր:
Լացը զսպեմ ու ձեր... ցա՛վը
փանեմ, ձիե՛ր...

Եվ իմ ներսում,
Որտեղ պարապությունն արդեն
Իր պյուռոսյան փխուր հաղթանակն էր
փոնում՝
Տեսնելով իր գլխին մի կեղծ դափնեպսակ,
Իսկ իր ջրսբոլորքում՝ սրույգ դիեր,-
Նո՛ւյն իմ ներսում հիմա, այս վայրկյանից,
Վրնջում են ձիե՛ր,
Խրխնջում են ձիե՛ր,
Դոփո՛ւմ,
Բերաններից կրա՛կ թափում
Ձիե՛ր...
Ձիե՛ր,
Այսքան ձիե՛ր...

Եվ ուրեերքս, իբրև յուրատեսակ «մեղա»,
Ինձ կտրում են փափուկ մահճակալից,
Տանում-նստեցնում են ա՛յն աթոռին
չորուկ,
Որի առաջ կա մի... փանջված գրասեղան:
Տանում-նստեցնում են այդ աթոռին
չորուկ,
Որպեսզի... ե՛ս հիմա ձիեր փեղափոխեմ,
Ձիեր փեղափոխեմ ի՛մ միջոցով-ձե՛ր մեջ,
Որ խրխնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Որ վրնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,
Դոփո՛ղ,
Բերաններից կրա՛կ թափող
Ձիե՛ր...

31.10.1965 թ.

Իսկ ի՞նչ:
Այդ էլ գուցե Աստվա՛ծ գիտի...
Պատացել է մութը արդեն վաղուց:
Ես հայացքով զարկվում նրա խավար
պատին՝
«Լույս զվարթ» եմ երգում իմ մտքի մեջ
Եվ «Առավոտ լուսո»:
Սա էլ գործ է, հարկա՛վ,
Սակայն շատ լո՛ւրջ մի գործ,
Իմ ուժից վե՛ր մի գործ:
Եվ իմ ձեռքով, ահա՛, խմբավարի նման.
Կեղծ նոտայի վրա ինքս եմ ինձ
ընդհատում,
Եվ այդ ինքնասասման սուր շարժումից
Ձեռքերս սկսում են լուռ մտածել...

Նո՛ւյն վայրկյանին
Ես հիշեցի հանկարծ, որ առավոտ կանուխ
Բեռնամեքենայով ձիեր էին տանում,
Հասկանո՛ւմ եք, այո՛,
Ձե՛ք հասկանում:
Այո՛, ձիե՛ր՝
Նրա՛նց,
Որ բյուրավոր դարեր
Իրենց մեջք ու թամբով ամե՛ն ինչ են
տարել,
Ողջ մարդկային ցեղի
պատմությունը կրե՛լ,
Իրենց սմբակներով պատմությունն
այդ գրե՛լ,

Չանախչի

Նախագահ Ջոն Քենեդիին սպանել են այլմոլորակայինների պատճառով

Թերևս նրա սպանության շարժառիթը եղել է այն հանգամանքը, որ Ջոն Քենեդին պահանջել է գաղտնազերծել ՉԹՕ-ների մասին եղած նյութերը:

Ֆանտաստիկ վարկածն այն մասին, որ դավադրության հետքերը, որին զոհ դարձավ Միացյալ Նահանգների 35-րդ նախագահ Ջոն Ֆիցջերալդ Քենեդին, գոյություն ունի շատ վաղուց:

Դարի ամենաառեղծվածային սպանության գաղտնիքի բացահայտման հեղինակն ամերիկյան ուֆոլոգ (ՉԹՕ-ների մասնագետ) Թիմ Կուպերն է: Նա հայտարարեց, որ ԱՄՆ-ի նախագահը, նկատելով ամերիկյան վերնախավի կապը այլմոլորակայինների հետ, մտադիր էր հրապարակ հանել այդ իրողությունը և այդ մտադրության համար էլ վճարեց իր կյանքով:

Որպես ապացույց՝ Կուպերն այրված «գործից» էջեր է ներկայացնում, որոնք իբր ձեռք է բերել 1999 թվականին: Նրա խոսքերով կիսայրված լուսանցքներով փաստաթղթերն իրեն էր ուղարկել Կենտրոնական հետախուզական վարչության անհայտ մի աշխատակից, որին հաջողվել էր ոչնչացնելու նպատակով կրակի մատնված գերգաղտնի փաստաթղթերից մի քանիսը փրկել:

Այսօր այդ թղթերը նորից են հայտնվել հրապարակում: Այս անգամ, սակայն, դրանց անդրադառնում է գրող Ուիլյամ Լեստերը, որը գիրք է գրում Քենեդու մասին:

Իբր թե նրա խնդրանքով ԿՀՎ-ն այդ «գործի» նյութերից գաղտնազերծել է Քենեդու երկու նամակ. դրանցից մեկը հասցեագրված է եղել ՆԱՍԱ-ի պետին: Նամակում Քենեդին ցանկություն է հայտնել տիեզերքի ուսումնասիրման բնագավառում համագործակցել ԽՍՀՄ-ի հետ: Իսկ մյուսը հասցեագրված է եղել Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենին: Թիվը՝ 12 նոյեմբերի 1963 թվականի, այսինքն՝ սպանվելուց 10 օր առաջ: Այդ նամակում ԱՄՆ-ի նախագահը պահանջում է իրեն ցույց տալ ՉԹՕ-ների վերաբերյալ գերգաղտնի նյութերը:

- Քենեդուն անհանգստացնում էր այն հանգամանքը, որ ԽՍՀՄ օդային տարածքում շատ են երևում թռչող ափսեներ, և որ խորհրդային իշխանությունները սխալմամբ դրանք կհամարեն ամերիկյան օբյեկտներ,- ասում է Լեստերն իր հարցազրույցներից մեկում և ավելացնում.

- Ահա ինչու Քենեդին ուզում էր գերգաղտնի այդ նյութերը վերցնել ՆԱՍԱ-ի և հատուկ ծառայությունների ձեռքից, որպեսզի ԽՍՀՄ-ին ապացուցի, որ այդ «ափսեները» ոչ մի կապ չունեն ամերիկյան կողմի հետ:

Սակայն ԱՄՆ-ի 35-րդ նախագահի այդ մտադրությունը իրականացնել չհաջողվեց:

Քենեդին սպանվեց 1963 թվականի նոյեմբերի 22-ի առավոտյան, Թեքսաս նահանգի Դալլաս քաղաքում:

Պաշտոնական վարկածով նրան գնդակահարեց միայնակ-մոլագար Լի Հարվի Օսվալդը: Իսկ գրող Թիմ Կուպերի վարկածով նախագահին սպանել է Քենեդու լիմուզինի վարորդ Ուիլյամ Գրիրը՝ գաղտնի գործակալ, որի առաջադրանքն էր թույլ չտալ, որ Քենեդին բացահայտի ՉԹՕ-ների գաղտնիքը:

«Դուք պետք է, որ իմանաք, որ Ռոլանը տվյալներ է հավաքում մեր գործունեության մասին, մի բան, որ մենք չենք կարող թույլ տալ»: Իբր թե փաստաթղթի առաջին էջի վրա գրել է ԿՀՎ տնօրենը: «Ռոլանը» Քենեդու պահակախմբի համար Ջոն Քենեդու ծածկագրված անունն է:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ. Փաստաթղթերի իսկականության սույն վարկածի ճշմարիտ լինելու մեջ մենք կհամոզվենք օգտագործված թանաքի, ծածկագրերի տիպերի, ջրային նշանների անալիզից հետո միայն: Նամակները հիմա ամերիկյան ուֆոլոգների կողմից ուղարկվել են ուսումնասիրության՝ մասնագետների կարծիքն իմանալու

Սվետլանա ԿԱՋԻՆԱ
«Կոմսոմոլսկայա պրավդա»

Հայտարարություն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հայտարարում է մրցույթ. ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչի թափուր տեղի համար:

Գիտական ստորաբաժանման ղեկավարի թափուր տեղի համար թեկնածու առաջադրելու իրավունքը, համաձայն կանոնադրության, պատկանում է կազմակերպության գիտական խորհրդին, ստորաբաժանման գիտական անձնակազմին և ինստիտուտի տնօրենին:

Պահանջվող փաստաթղթերը՝ ինքնակենսագրություն, հաշվառման անձնական թերթիկ, անձնագրի և դիպլոմի պատճենները, քաղվածք աշխատանքային գրքույկից, ներկայացնել Պատմության ինստիտուտի գիտքարտուղար Հ. Մուրադյանին մինչև ս.թ. օգոստոսի 1-ը (հասցե՝ Մ. Բաղրամյան 24/4, 7-րդ հարկ):

Թեկնածուներին ներկայացվող պահանջները.

պատմական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան, գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 10 գիտական աշխատությունների հեղինակ: Հրատարակված աշխատությունների ցանկ՝ հաստատված համապատասխան կարգով:

ՈՒՂՂՈՒՄ

Մեր թերթի նախորդ համարում հրապարակված «Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների վկայությունները որպես իրավաբանական ցուցմունք՝ երեք լեզուներով» գրախոսության հեղինակի ազգանվան մեջ սպրդել էր վրիպակ. պետք է լիներ Արմեն Մարության: Հայցում ենք հեղինակի ներողամտությունը:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Գիրություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 30. 06. 2011 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА